«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2022

ՆԱԽԱԲԱՆ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ կամ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (այսուհետ՝ ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 10

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 12

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 12

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 16

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 18

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 18

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 21

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 25

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 33

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 41

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 46

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 52

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 57

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 60

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 63

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 68

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 69

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 69

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 71

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 75

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 77

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 78

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 79

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԳՊՀ-ն իր գործունեությունը հիմնականում Գավառ քաղաքում ծավալող, Գեղարքունիքի մարզում բարձրագույն կրթությունը տեղում հասանելի դարձնող բացառիկ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է:

Փորձագիտական խումբը հաշվի է առել նաև այն, որ ԳՊՀ-ն երկրորդ անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, և համարում է, որ նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների իրականացումը դրական ազդեցություն է ունեցել ԳՊՀ տարբեր ուղղություններով գործունեության վրա: ԳՊՀ-ն գործողություններ է ձեռնարկել ստացված խորհրդատվությունների մեծ մասի ուղղությամբ, սակայն մեծաթիվ գործողություններ իրականացվել են հավատարմագրման երկրորդ գործընթացից միայն կարճ ժամանակ առաջ, ինչի մասին է վկայում փաստաթղթերի զգալի թվի՝ հենց 2021 թ.-ին հաստատված լինելը: Այդ պատճառով բավական շատ նոր ընթացակարգեր դեռևս չեն անցել ՊԻԳԲ շրջափուլը:

ԳՊՀ կողմից առաջարկվող կրթական ծրագրերն ուղղված են տարածաշրջանում պահանջված մասնագիտություններով բակալավրական և մագիստրոսական կրթությանը: Ծրագրերն ընդհանուր առմամբ կազմված են ընդունված կառուցվածքով, ինչպես նաև ապահովված են ՄԿԾ-ների մշակման և իրականացման փաստաթղթային հիմքերը, սակայն ծրագրերի առանձին բաղադրիչների կապը որոշ դեպքերում թույլ է: Մասնավորապես՝ հստակ չէ վերջնարդյունքների և մեթոդների կապը, ինչպես նաև տեսանելի չէ հենց վերջնարդյունքների ամբողջությունը՝ որպես համակարգ: Այդուհանդերձ, կրթական ծրագրերը մշակվում և իրականացվում են՝ հաշվի առնելով մասնագիտությունների առանձնահատկությունները, ինչն էապես նպաստում է շրջանավարտների մրցունակությանը: ԳՊՀ-ում նաև սահմանված են որոշակի պահանջներ դասավանդողների նկատմամբ, ինչպես նաև նրանց գնահատման ընթացակարգեր, ինչի արդյունքում ՄԿԾ-ները դասավանդվում են մասնագետների կողմից, այդ թվում՝ գործատուների: ՄԿԾ-ների իրականացումն ապահովված է նաև համապատասխան կրթական միջավայրով և տարատեսակ նյութական ռեսուրսներով: Մարդկային ռեսուրսների վրա ԳՊՀ-ն տարեկան բյուջեներով էապես ավելի շատ է ծախսում, քան

նյութական ռեսուրսների վրա, սակայն ԳՊՀ-ում ավելի շատ կարևորվում է նյութական ռեսուրսների բարելավումը:

Կրթական ծրագրերի առկա խնդիրներով հանդերձ՝ կարելի է եզրակացնել, որ ԳՊՀ-ն ընդհանուր առմամբ ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում, սակայն պետք է հետևողական լինի առկա խնդիրների ու վտանգների վերացմանն ուղղված գործողությունների իրականացման հարցում:

Լինելով բացառիկ բուհ՝ ԳՊՀ-ի առաքելությունն ընկալելի է և միասնական շահակիցների գրեթե բոլոր խմբերի շրջանում: ԳՊՀ զարգացման ուղղություններն ու նպատակները ամրագրված են ռազմավարական ծրագրում: Նպատակների համալիրը, սակայն ամրացված չէ աստիճանակարգման հստակ տրամաբանությամբ, ինչի արդյունքում դժվար է հասկանալ, թե յուրաքանչյուր պահի յուրաքանչյուր աշխատակից նպատակներից որին է ուղղում իր ջանքերը: Այդպիսի իրավիճակում դժվարանում է նաև կառավարման համակարգի դերը, որի առանձին օղակներ կարող են երկար ժամանակ մնալ անորոշության մեջ: Այնուամենայնիվ, ԳՊՀ-ն սահմանել է համատարած հաշվետվողականության մեխանիզմ, որը թույլ է տալիս իրականացնել թեև ոչ արդյունավետ, սակայն արդյունք տվող կառավարում: Նման դեպքում առանձնակի է կարևորվում տեղեկատվության կառավարումը, որի մոտեցումները, սակայն, ԳՊՀ-ում դեռևս լիարժեք մշակված և ներդրված չեն: Խնդիր առաջանում է նաև այն պատճառով, որ որակի ներքին ապահովման համակարգը դեռևս չի գեներացնում հավաստի տվյալներ և վերլուծություններ, չի դրսևորում քննադատական մոտեցում՝ թեև միևնույն ժամանակ իրականացնելով մեծածավալ աշխատանք: Այնուամենայնիվ, ԳՊՀ ՈԱ համակարգը հիմնված է ՈԱԵՉՈՒ պահանջների վրա, ինչպես նաև մշակվել և աստիճանաբար ներդրվում են տարբեր մեխանիզմներ, ինչը թույլ է տալիս ունենալ հիմնավոր լավատեսություն առ այն, որ բուհը որակի մշակույթի ձևավորման ճանապարհ է անցնում: Այդպիսով ԳՊՀ-ն պետք է կարողանա չափելիորեն գնահատել իր նպատակների իրականացումն ու գործընթացների որակը:

Կարելի է եզրակացնել, որ բուհի զարգացման կայունությանը վտանգներ չեն սպառնա, եթե ԳՊՀ-ն հետևողականորեն զարգացնի որակի մշակույթը, և որակի ներքին ապահովման համակարգը լիարժեքորեն աջակցի կառավարման համակարգին:

ԳՊՀ-ն ձգտում է լինել իր համայնքի լիարժեք և վստահելի մասնակից՝ փորձելով ամեն ինչում աջակցելով իր դիմորդներին, ուսանողներին և շրջանավարտներին, փորձելով հաստատել հնարավորինս շատ արտաքին կապեր, փորձելով գործել հնարավորինս թափանցիկ, և փորձելով իրականացնել հանրօգուտ հետազոտություններ: Այդ ձգտումն առանձնակի է կարևորվում՝ հաշվի առնելով ԳՊՀ բացառիկ դերը տարածաշրջանում: Այնուամենայնիվ, ոչ բոլոր գործընթացներն է հաջողվում լիարժեք իրականացնել՝ հիմնականում պայմանավորված այնպիսի կարողությունների զարգացմանը հատկացվող ոչ բավարար ուշադրությամբ, ինչպիսին են, օրինակ՝ օտար լեզուների և հատկապես հետազոտական մեթոդների իմացությունը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ԳՊՀ-ում նկատելի է նշված գործընթացներով զբաղվելու մեծ ցանկություն, ինչը հաշվի առնելով՝ կարելի է եզրակացնել, որ ճիշտ թիրախավորած ներդրումների դեպքում ԳՊՀ-ն կարող է ապահովել իր երկարաժամկետ կայուն ինտեգրումն ինչպես տեղական, այնպես էլ

միջազգային համայնքին, սակայն պետք է անհապաղ սկսի զարգացնել հատկապես հետազոտական կարողությունները, որպեսզի դրանք հասցնեն վերածվել արդյունքի:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. առաքելության հիմնականում միասնական ընկալումը շահակիցների շրջանում,
2. կառավարման համակարգի տարբեր օղակների գործառույթների հստակ սահմանված լինելը,
3. կոլեգիալ կառավարման մարմինների ներուժը,
4. կրթական ծրագրերի մշակման և իրականացման ընթացակարգային հիմքերը,
5. ակադեմիական ազնվությունը,
6. ուսանողների բավարարվածությունը,
7. համապատասխան մասնագիտական որակներով օժտված պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ,
8. կրթական միջավայրը,
9. գործունեության թափանցիկությունը,
10. միջազգային ծրագրերին մասնակցությունը և շարժունության հնարավորությունները,
11. որակի ներքին ապահովման համակարգի ապահովվածությունը ռեսուրսներով:

Հաստատության թույլ կողմերն են.

1. նպատակների համալիրում առկա խզումները՝ շահակիցներից տեսլական, տեսլականից նպատակներ, նպատակներից գործողություններ, գործողություններից նպատակների վերանայում,
2. կրթական ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքների հստակության պակասը,
3. ՊԴԿ ծանրաբեռնվածությունը,
4. հետազոտական գործունեության համակարգված պլանավորման և իրականացման պակասը,
5. ընդունված ժամանակակից հետազոտական մեթոդների կիրառման պակասը,
6. գրադարանային ֆոնդում ժամանակակից գրականության պակասը,
7. շարժունության ծրագրերում որպես հյուրընկալող կողմ հանդես գալու սահմանափակումները,
8. գործընթացների որակի մասին հավաստի տեղեկատվության, չափումների, վերլուծությունների և քննադատական մոտեցման պակաս:

Խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Հստակեցնելով պետության դերը՝ ըստ անհրաժեշտության վերանայել և պարզեցնել բուհի առաքելության ձևակերպումը՝ միաժամանակ համապատասխանեցնելով ձևավորված պատկերացումներին:

2. Ձևավորել և ձևակերպել բուհի զարգացման այնպիսի տեսլական, որը միասնական կլինի շահակիցների հիմնական խմբերի համար:

3. Տեսլականի երկարաժամկետ իրագործման տրամաբանությունից ելնելով՝ հիմնավորել և սահմանել մոտակա տարիների զարգացման գերակա ուղղությունները՝ դրանց համապատասխան իրականացնելով հատկացվող միջոցների վերաբաշխում:

4. Ապահովել նպատակների, խնդիրների և գործողությունների այնպիսի աստիճանակարգվածություն, որ յուրաքանչյուր ստորաբաժանման և աշխատակցի համար տեսանելի լինի իր գործողությունների կապն առաքելության և տեսլականի հետ:

5. Գործարկել ՌԾ՝ ըստ անհրաժեշտության վերանայման մեխանիզմներ՝ պատշաճ արձագանքելով պլանների կատարման բոլոր շեղումներին:

Կառավարումն ու վարչարարությունը

6. Ներդնել կառավարման համակարգի, դրա առանձին օղակների և հատկացվող ռեսուրսների արդյունավետության գնահատման մեխանիզմներ և հետևողականորեն արձագանքել գնահատման արդյունքներին:

7. Բարձրացնել հոգաբարձուների խորհրդի ներուժի օգտագործման արդյունավետությունը՝ ուժեղացնելով խորհրդի անդամների ներգրավվածությունը ԳՊՀ ընթացիկ գործընթացներում:

8. Իրականացնել արտաքին միջավայրի համակարգված և կանոնավոր ուսումնասիրություն և տարբեր գործոնների ազդեցության գնահատում:

9. Ներդնել տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը, կիրառումը և հրապարակումը գնահատելու մեխանիզմներ՝ կարևորելով հավաքագրված քանակական և որակական տվյալների խոր վերլուծության իրականացումը և միաժամանակ դիտարկելով տեղեկությունների հավաքագրման գործիքների դիվերսիֆիկացման հնարավորություններ:

Մասնագիտության կրթական ծրագրերը

10. Հստակ տարբերակել մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի վերջնարդյունքները՝ դրանք համապատասխանեցնելով ՈԱՇ-ին, ինչպես նաև՝ արդեն ՈՈՇ-ին: Վերջնարդյունքների երեք խմբերի միջև ապահովել տրամաբանական կապը, դրանք հնարավորինս հստակ ձևակերպել և չափելի դարձնել:

11. Դասավանդման, ուսումնառության և գնահատման նախընտրելի մեթոդները սահմանելիս հաշվի առնել վերջնարդյունքների առանձին տեսակների առանձնահատկությունները:

12. Ներդնել ուսանողների ուսումնական բեռնվածության պլանավորման և մշտադիտարկման մեխանիզմներ:

13. Ընդլայնել բենչմարքինգի և ծրագրերի բարելավմանն ուղղված այլ գործընթացների շրջանակը և խորությունը՝ միաժամանակ ներդնելով ուսուցման արդյունքների և արդյունավետության համակարգված գնահատման մեխանիզմներ:

Ուսանողները

14. Հստակեցնել ուսանողական կառույցների դերը ուսանողների շահերը ներկայացնելու և այլ գործընթացներում:

15. Ակտիվացնել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների տրամադրումը և գնահատել դրանց ազդեցությունը շրջանավարտների զբաղվածության ցուցանիշների վրա՝ արդյունքում բարձրացնելով ԳՊՀ գրավչությունը դիմորդների շրջանում:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

16. Գնահատել ՊԴԿ բեռնվածության արդյունավետությունն ու վտանգները և ըստ անհրաժեշտության իրականացնել բարելավումներ:

17. ՊԴԿ վերապատրաստումները պայմանավորել ՄԿԾ-ների դասավանդման համար առաջնահերթ կարիքներով՝ կարևորելով նաև արտաքին մասնագիտական վերապատրաստումները, ինչպես նաև միջազգայնացումը:

Հետազոտությունը և զարգացումը

18. Ապահովել գիտահետազոտական գործունեության պլանավորման և իրականացման համակարգված մոտեցում՝ այդ թվում հստակեցնելով գործընթացների կառավարման համակարգը, հետազոտություններին աջակցության և ֆոնդահայթայթման գործընթացները:

19. Զարգացնել դասախոսական կազմի՝ հետազոտական մեթոդների տիրապետման կարողությունները, այնուհետև նաև ուսանողների հետազոտական կարողությունները:

20. Հետազոտական մեթոդների տիրապետման կարողությունները զարգացնելուց հետո գործարկել առկա արտաքին կապերը հետազոտության միջազգայնացման ուղղությամբ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

21. Ընդլայնել և թարմացնել գրադարանի գրապաշարը, օրինակ՝ բաժանորդագրվելով թվային գրադարանների, և սովորեցնել ուսանողներին կատարել հետազոտություններ այդ ժամանակակից աղբյուրների օգնությամբ:

22. Ներդնել ֆինանսական կառավարման արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ նպատակադրելով և մշտադիտարկելով բյուջեի կառուցվածքի փոփոխման միտումները:

Հասարակական պատասխանատվությունը

23. Հասարակությանը հաշվետվողականությունը և հետադարձ կապը դիտարկելով որպես գործընթացները բարելավելու խթան և հարթակ՝ ինտեգրել հասարակական պատասխանատվության ոլորտում գործունեությունը ռազմավարական կառավարման և ՈԱ գործընթացներին:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

24. Զարգացնել միջազգային հաղորդակցությունը՝ թարգմանելով կայքը և մշակելով ծրագրեր և դասընթացներ օտարերկրյա ուսանողների համար:

25. Հստակեցնել և ըստ անհրաժեշտության վերանայել միջազգայնացման ռազմավարությունը՝ սահմանելով հստակ նպատակներ, գործողությունների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլաններ:

26. Ներդնել ներքին շահակիցների շրջանում օտար լեզուների իմացության ապահովման կայուն մեխանիզմ՝ նպաստելով նրանց միջազգային շարժունությանը:

Որակի ներքին ապահովման համակարգը

27. Հստակեցնել ՈԱ բաժնի դերակատարումը բարելավումների իրականացման փուլերում՝ հնարավորինս խուսափելով շահերի հետագա բախումներից: Միաժամանակ հստակեցնել ՈԱ բաժնի դերակատարումը մուտքի կառավարման գործընթացներում:

28. Գնահատելով ՈԱ համակարգի, դրան հատկացվող ռեսուրսների արդյունավետությունը և կարիքները՝ ապահովել հնարավորինս թիրախավորված և կարիքներից բխող վերապատրաստումներ և ռեսուրսների հատկացում:

29. Բազմազանեցնել ՈԱ գործընթացներում տեղեկությունների հավաքագրման գործիքակազմը և վերլուծել գործիքների արդյունավետությունը՝ ընտրելով շահակիցների յուրաքանչյուր խմբի հետ աշխատելու առավել արդյունավետ մոտեցումներ:

30. ՈԱ ընթացակարգերի իրականացումը երաշխավորելու համար ամրագրել հստակ գործողություններ և դրանց իրականացման պարբերականություն:

Տիգրան Մնացականյան
Փորձագիտական խմբի ղեկավար

28 փետրվարի 2022թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

2017 թվականին Գավառի պետական համալսարանը ոչ առևտրային կազմակերպությունից վերակազմավորվել է Գավառի պետական համալսարան հիմնադրամի: Համալսարանն ունի հավակնոտ առաքելություն և ռազմավարական ծրագիր: Միջազգայնացման առումով Գավառի համալսարանը շատ հավակնոտ է: Միջազգային փորձագետի պարտականություններից մեկն է եղել վերլուծել այս հանձնարարականի իրագործելիությունը և առաջարկներ անել բուհի որակի ներքին ապահովման համակարգի համար: Դա արվել է ՈԱԱԿ-ի որակի չափանիշների հիման վրա՝ հիմք ընդունելով ՈԱԵՉՈՒ-ն: Առաջարկները և մեկնաբանություններն արվել են՝ հիմնվելով ինքնավերլուծության և այցի ընթացքում կայացած հանդիպումների վրա:

ՄՈՒՀ-ն ապահովում է իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը՝ տրամադրելով համապատասխան ծառայություններ տարածաշրջանին: ՄՈՒՀ-ն ստանձնել է տարածաշրջանի «սոցիալական սանդուղք»-ի դերը:

Նախորդ հավատարմագրման գործընթացի հիման վրա ՄՈՒՀ-ը բարելավմանն ուղղված փոփոխություններ է կատարել տարբեր ոլորտներում:

Կրթական ծրագրեր

Կրթական ծրագրերի վերլուծության արդյունքները վկայում են ԳՊՀ կրթական ծրագրերի հավաստիության մասին, քանի որ համադրելիության առումով դրանք համահունչ են առաջատար բուհերի ուսումնական ծրագրերին և նպաստում են ուսանողների ակադեմիական շարժունությանը: ԳՊՀ ակադեմիական ծրագրերը համադրելի են իրենց կառուցվածքով, կրթական բլոկերով և կրեդիտների քանակով: ԳՊՀ-ում ներդրված ECTS կրեդիտային համակարգը և եվրոպական ձևաչափի հավելվածը լիովին համադրելի են կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի հետ, որն ապահովում է շարժունություն Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում:

Դասախոսական կազմ

ՄՈՒՀ-ն ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ ուսումնական հաստատության առաքելությունն իրականացնելու համար: ԳՊՀ-ն կարևորում է ուսանողակենտրոն մոտեցումը: Սա ուսանողների համար բավականին ակնհայտ է: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ ԳՊՀ-ն մշակել է դասախոսական կազմին վերաբերող և գնահատման ընթացակարգեր, ինչպես նաև աշխատանքի նկարագրություններ: Ուսուցիչները, կարծես, գոհ են հավաքագրման, առաջխաղացման և գնահատման առկա ընթացակարգերից:

Դասավանդում-ուսումնառություն

Թեև կա հավակնություն հետագա տարիների ընթացքում դառնալ միջազգային ուսանողական քաղաք, շատ քիչ դասախոսներ են պատրաստ դասավանդել անգլերենով, ուստի օտար լեզուներով լրացուցիչ վերապատրաստումը շահավետ կլինի նպատակին հասնելու համար:

Կրթական միջավայր

ԳՊՀ ենթակառուցվածքները և մարդկային ռեսուրսները ներկայումս բավարար են ուսումնական գործընթացն իրականացնելու համար: ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկել՝ ուղղված համակարգիչների պակասը լրացնելուն, և այլն:

Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարծում է, որ ԳՊՀ գրադարանը դեռևս կարիք ունի մասնագիտական գրականությամբ համալրման՝ թեկուզև թվային գրադարանին բաժանորդագրվելու միջոցով:

Հետազոտություն

Ռազմավարությունը, որն արտացոլում է ՄՈՒՀ-ի հավակնությունները հետազոտության մեջ, դեռ հստակ սահմանված չէ: Միջազգային գիտահետազոտական գործունեության իրականացման առումով հետազոտական գործունեությունը դեռևս սահմանափակ է: Կան հետազոտական ուղղություններ, բայց դրանք հստակ ձևակերպված չեն:

Չկա կանոնակարգված Հետազոտության կառավարում, և հետազոտական ձեռքբերումները հիմնականում գրանցվում են անձնական նախաձեռնությունների միջոցով:

Միջազգայնացում

ԳՊՀ-ն համագործակցում է միջազգային մի շարք գործընկերների հետ: Աշխատակազմի մի շարք անդամներ մասնակցել են արտերկրում անցկացվող սեմինարների, աշխատաժողովների և թրեյնինգների: Պարզ չէ, թե ինչպես են միջազգային այս փորձի վերջնարդյունքներն արտացոլվել լավագույն փորձի մեջ:
Համալսարանը դեռ պատրաստ չէ ընդունել միջազգային ուսանողների, քանի որ բոլոր դասերն անցկացվում են հայերենով:

Որակի ապահովում

Համալսարանը խոսելու մշակույթից անցնում է գործելու մշակույթի: Անձնակազմին դա հաջողվում է, քանի որ տեղի են ունենում հստակ գործընթացներ, բայց շատ որոշումներ և քննարկումներ, թվում է, ոչ պաշտոնական հարթակում են լինում: Սա լավ է մթնոլորտի և համալսարանին պատկանելու զգացողության համար, բայց ավելի դժվարըմբռնելի է, երբ խոսքը վերաբերում է ընթացակարգերի սահմանմանը:

Համալսարանի որակի ապահովման բաժինը լիարժեք ստորաբաժանում է, որը, ինչպես պարզ դարձավ այցի ընթացքում, որակի մշակույթ է ստեղծում հաստատության ներսում: Այնուամենայնիվ, նպատակահարմար կլինի, որ այս բաժինն ստանա ավելի խորացված վերապատրաստում, որպեսզի ներդնի ավելի համապատասխան AOL (Ուսուցման ապահովման) համակարգ և ավելի լավ պատկերացում կազմի PDCA (ՊԻԳԲ) շրջափուլի մասին, որը համակարգված ձևով ներառված չէ փաստաթղթերում:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

1. **Տիգրան Մնացականյան՝** տնտեսագիտության թեկնածու, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Ավագ փորձագետ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Տաթևիկ Դավթյան՝** իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, փորձագիտական խմբի անդամ:
3. **Արամ Մխիթարյան՝** տնտեսագիտության թեկնածու, Եվրոպական համալսարանի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դոցենտ, «Ագրոլիզինգ լիզինգային վարկային կազմակերպության» գործադիր տնօրեն, փորձագիտական խմբի անդամ:
4. **Սոֆի Պետերս՝** Բրյուսելի կառավարման դպրոցի Միջազգային կապերի և հավատարմագրման գծով պրոռեկտոր, փորձագիտական խմբի միջազգային անդամ:
5. **Գևորգ Բարսեղյան՝** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրանտ, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ, և նշանակվել ՈԱԱԿ տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ Մերի Բարսեղյանը:

Թարգմանությունը կատարել է Քրիստինե Օհանյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Գավառի պետական համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Առկա են եղել որոշակի տեխնիկական և բովանդակային թերություններ, ինչի պատճառով ինքնավերլուծությունը վերադարձվել է հաստատությանը: Այնուհետև սահմանված ժամկետներում ԳՊՀ-ն 2021 թ.-ի հուլիսի 12-ին ներկայացրել է ինքնավերլուծության վերանայված տարբերակը, որը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել համապատասխան հիմքերը և ձևաչափով պահանջվող հավելվածները: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, համալսարանի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները մասնակցել են նաև բուհում տեղի ունեցող առցանց դասերին: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]:

Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախապատրաստական այց

2021 թվականի նոյեմբերի 10-ին Զում (Zoom) հարթակում տեղի է ունեցել առցանց հանդիպում Գավառի պետական համալսարանի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ համալսարանի հետ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները, հստակեցվել են համավարակով պայմանավորված առցանց միջավայրում հիբրիդային տարբերակով իրականացվող հանդիպումների կազմակերպման կանոնները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2021թ. նոյեմբերի 20-ից 23-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետ Սոֆի Պետերսի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպմամբ և ավարտվել ԳՊՀ ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են բուհի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն և [3] ռեսուրսների դիտարկում[4]:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար և անբավարար:**

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է համալսարանի լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, իրականացված առցանց դասալսումների, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքը ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է Գավառի պետական համալսարանին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ԳՊՀ-ն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 31.01.2022թ.-ին: ՈԱԱԿ-ը հաստատության դիտարկումները տրամադրել է փորձագետներին: 11.02.2022թ.-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է հաստատության և փորձագիտական խմբի առցանց հանդիպում, որի ժամանակ քննարկվել են ներկայացված դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ:

Հաշվի առնելով հաստատության դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը:

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

28 փետրվարի 2022թ.

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հունիսի 9-ի թիվ 660-Ն որոշմամբ «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվել է «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի, որը «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդն է, որին սահմանված կարգով անցել են վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները:

Համալսարանի առաքելությունն է՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ բնական, հումանիտար և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստումը, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, դաստիարակչական, սոցիալ-մշակութային գործառույթների, արտաքին համագործակցության ծրագրերի պատշաճ իրականացումը, գործատու սուբյեկտի պարտականությունների բարեխիղճ կատարումը, դասախոսների ու վարչատնտեսական աշխատակիցների, ինչպես նաև ուսանողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Կրթություն. Համալսարանն իրականացնում է առկա ուսուցմամբ բակալավրիատի 16, հեռակա ուսուցմամբ՝ 13, մագիստրատուրայի՝ 13 կրթական ծրագրեր և ասպիրանտուրայի՝ 1 գիտակրթական ծրագիր: 2021թ.-ն՝ ներառյալ, 24 տարի շարունակ Համալսարանը թողարկել է 7607/4446 առկա ուսուցմամբ բակալավրիատի, 2304-ը հեռակա ուսուցմամբ բակալավրիատի և 857-ը՝ մագիստրատուրայի/ շրջանավարտներ:

ՄԿԾ-ները մշակվում և իրականացվում են՝ հետապնդելով աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող մասնագետների պատրաստման նպատակ: ԳՊՀ-ում իրականացվող բոլոր ՄԿԾ-ները պարբերաբար վերանայվում են՝ պայմանավորված տարածաշրջանում աշխատաշուկայի պահանջների և տնտեսական գերակայությունների փոփոխմամբ, ինչպես նաև արտաքին ու ներքին շահակիցների կարիքների հաշվառմամբ: Հիմք ընդունելով ԵԲԿՏ որակի չափանիշները՝ ԳՊՀ-ում շարունակաբար բարելավվում են բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերը:

Հետազոտություն. ԳՊՀ-ում հետազոտական գործունեության խրախուսման համար առկա են հստակ փաստաթղթային հիմքեր, մշակված են ոլորտը կարգավորող իրավական ակտեր, կիրառվում են գիտահետազոտական գործունեությունը խթանող կառուցակարգեր և վերջիններիս արդյունավետությունը գնահատող չափելի գործիքներ: Բուհն ունի բավարար գիտական ներուժ, ինչպես նաև ՀՀ տարբեր գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների, կազմակերպությունների և միջազգային կառույցների հետ կնքված համագործակցության հուշագրեր, որոնք հնարավորություն են ընձեռում կազմակերպել գիտաժողովներ, տպագրել հոդվածներ, բարելավել մագիստրոսական և բակալավրիական կրթական ծրագրերի հետազոտական

բաղադրիչները, միևնույն ժամանակ, ըստ անհրաժեշտության, օգտագործելով գործընկեր կազմակերպությունների լաբորատոր բազան և նյութատեխնիկական ռեսուրսները, իրականացնել համատեղ գիտահետազոտական աշխատանքներ և հրապարակել արդյունքները, կազմակերպել սեմինարներ, քննարկումներ, այլ միջոցառումներ:

Միջազգայնացում. ԳՊՀ-ն կարևորում է ուսուցման և հետազոտության ոլորտներում տեղի ունեցող միջազգայնացման գործընթացները, ակադեմիական փոխանակման ծրագրերի իրականացումը և սերտ համագործակցություն է հաստատում տարբեր երկրների համալսարանների հետ: Համալսարանը շարունակական աշխատանքներ է կատարում միջազգային գործընկերության ընդլայնման ուղղությամբ: Համալսարանն անդամակցում է ակադեմիական շարժունության և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակներ ունեցող 21 միջազգային ծրագրի՝ համագործակցելով շուրջ 60 գործընկեր համալսարանների հետ, աշխարհի տարբեր մասերից: Ակադեմիական փոխանակման ծրագրերին և միջազգային այլ ծրագրերին ու նախաձեռնություններին մասնակցած ԳՊՀ 117 ուսանողի և պրոֆեսորադասախոսական կազմի 211 ներկայացուցիչների թիվը, ըստ ԳՊՀ-ի, փաստում է, որ միջազգայնացումը Համալսարանի զարգացման ռազմավարական ուղղություններից է:

Որակի ապահովում. ԳՊՀ-ում որպես առաջնահերթություն հռչակված են կրթության որակի բարձրացումը, որակյալ ուսումնական, գիտահետազոտական, դաստիարակչական միջավայրի ապահովումը, որակի մշակույթի ամրապնդումը: Համալսարանի գործունեության առանցքային ուղղությունն է որակի ներքին ապահովումը, որը բնութագրվում է որպես համապատասխանություն բուհի առաքելությանը և նպատակին: ԳՊՀ-ում կրթության որակի ներքին ապահովման գործընթացները կանոնակարգված են, սահմանված են պատասխանատուների իրավասությունների և պարտականությունների, գործառույթների շրջանակը, ինչպես նաև պահանջվող իրազեկությունները: Համալսարանում շարունակական աշխատանքներ են կատարվում որակի ապահովման եվրոպական չափանիշների պահանջներին համապատասխան՝ կրթական գործընթացի յոթ բաղադրիչների՝ որակի ներքին ապահովման քաղաքականության և ընթացակարգի, մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, գնահատման, մշտադիտարկման և պարբերական վերանայման, ուսումնառության ռեսուրսների և ուսանողներին աջակցության, սովորողների ուսումնառության գնահատման, պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովման և շարունակական բարելավման, տեղեկատվական համակարգերի, հրապարակայնության ու հաշվետվողականության մեխանիզմների բարելավման, որակի ներքին ապահովման ընթացակարգերի, որակի կառավարման կառուցակարգերի բարեփոխման նպատակով:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Համալսարանի առաքելությունը բուհի գործունեության հիմնական ուղղությունների, խնդիրների և նպատակների ամրագրման միջոցով սահմանված է հիմնադիր փաստաթղթում՝ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ:

Ըստ 2017-2022 թթ. ռազմավարական ծրագրի՝ ԳՊՀ-ն մարզում գործող միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որն ունի կրթական, գիտահետազոտական, դաստիարակչական, ինչպես նաև սոցիալական, ժողովրդագրական, տնտեսական, մշակութային կարևոր գործառույթներ: Ռազմավարական ծրագրում ձևակերպված ԳՊՀ առաքելությունն է մարզի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ մրցունակ մասնագետների պատրաստումը, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, դաստիարակչական, սոցիալ-մշակութային գործառույթների, արտաքին համագործակցության ծրագրերի պատշաճ իրականացումը, գործատու սուբյեկտի պարտականությունների բարեխիղճ կատարումը, դասախոսների ու վարչատնտեսական աշխատակիցների, ինչպես նաև ուսանողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

ԳՊՀ ՌԾ-ում, առաջնահերթություններից ելնելով, սահմանված են 9 գերակա ուղղություններ: Վերջիններս բխում են ձևակերպված առաքելությունից: Յուրաքանչյուր գերակա ուղղության շրջանակներում առանձին նպատակների սահմանմամբ և դրանցից ածանցվող խնդիրների ձևակերպմամբ նախատեսված են գործողություններ:

Այդուհանդերձ, սահմանված գերակա ուղղությունները համընդգրկուն են և հաճախ խաչվում են:

ԳՊՀ ձևակերպված տեսլականը հատվածային է և հիմնականում անորոշ:

Այցի ընթացքում պարզվեց, որ ԳՊՀ տարբեր օղակների և շահակիցների խմբերի կարծիքով բուհի զարգացման առաջնահերթ ուղղությունը տարբեր է: Մասնավորապես՝ ըստ ռեկտորի՝ տեսլականի կարևոր բաղադրիչը միջազգայնացումն է, իսկ ըստ հոգաբարձուների խորհրդի՝ գիտության զարգացումն է առաջնահերթ: Բացի այդ՝ թե՛ արտաքին, թե՛ ներքին շահակիցները նշեցին Գավառի՝ համալսարանական քաղաք դառնալու տեսլականի մասին:

Թեև ԳՊՀ-ն պետական բուհ է, սակայն չի ստանում բազային ֆինանսավորում. պետական բյուջեից ֆինանսավորումը վերաբերում է միայն ուսման վարձերը վճարելուն: Ինչպես պարզվեց այցի ընթացքում, ԳՊՀ հիմնադիրներն են ցանկացել, որ բուհը դառնա պետական: Միևնույն ժամանակ բուհի հոգաբարձուների խորհրդի հետ հանդիպմանը փաստվեց, որ թեև պետությունը շատ խնդիրներ է դնում բուհի առաջ, դրան համարժեք չի ֆինանսավորում, ինչի արդյունքում բուհն ստիպված է այլ աղբյուրներից միջոցներ փնտրել:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ԳՊՀ-ն ունի ՌԾ մշակման և ընդունման ընթացակարգ, որով նախատեսված է շահակիցների խմբերի ներգրավմամբ աշխատանքային խմբի ձևավորում, նախագծի քննարկումներ:

ՌԾ-ն ընդունվում է հոգաբարձուների խորհրդի կողմից, որի կազմում ներկայացված են շահակիցների տարբեր խմբեր: Այցի ընթացքում պարզվեց, որ հոգաբարձուների խորհուրդը նաև մասնակցություն է ունենում ՌԾ մշակմանը: Միևնույն ժամանակ հոգաբարձուների խորհուրդը չի ունենում ազդեցություն ֆինանսական ռեսուրսների բաշխմամբ արտահայտվող առաջնահերթությունների վրա՝ հաստատելով ռեկտորի կողմից ներկայացվող նախագծերը:

Որպես շահակիցների կարիքների հաշվառման միջոց դիտարկվում են բազմաթիվ հարցումները, սակայն դրանք ռազմավարական մակարդակի հարցեր չեն պարունակում: Դրանց ազդեցությունը նպատակների ձևավորման վրա առնվազն տեսանելի չի:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Յուրաքանչյուր գերակա ուղղության համար սահմանված են նպատակները, և դրանց իրականացման համար ձևակերպված է 60 խնդիր: Այդ նպատակների իրագործման համար մշակված են համալսարանական և ստորաբաժանումների մակարդակներում գործողությունների հնգամյա, միջնաժամկետ (2.5 տարվա) և տարեկան պլան ժամանակացույցներ, որոնցում ամրագրված են գործողությունների կատարման ժամկետները, պատասխանատու անձինք կամ կառույցները, առկա և պահանջվող ռեսուրսները, ինչպես նաև նախատեսված են յուրաքանչյուր գործընթացի արդյունավետության ցուցիչները:

Այդուհանդերձ, այցի ընթացքում պարզ դարձավ, ՌԾ-ից բխեցված և հստակեցված չեն բուհի ոլորտային ռազմավարությունները (օրինակ՝ մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարությունը, ակադեմիական քաղաքականությունը և այլն):

Տարեկան հաշվետվությունները կազմվում են՝ ըստ ՌԾ նպատակների: Սակայն ՌԾ-ում ընթացիկ փոփոխություններ չեն արվել: Ըստ հոգաբարձուների խորհրդի անդամների՝ ՌԾ վերանայման անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ բուհի ղեկավարությունը ճկուն արձագանքում է իրավիճակին: Միևնույն ժամանակ արդեն ուրվագծված են 2022-2027 թթ. ՌԾ գերակա ուղղությունները՝ նորարարական

տեխնոլոգիաներ, արհեստական բանականություն, գիտություն, իսկ ֆինանսական միջոցների վերաբաշխումը նախատեսվում է իրականացնել աստիճանաբար:

Դատողություններ: ԳՊՀ առաքելությունը, չնայած բավական ընդարձակ ձևակերպմանը, պարզ է շահակիցների գրեթե բոլոր խմբերի համար: Այն լիովին համահունչ է ՈԱՇ-ին, քանի որ բուհի հիմնական գործունեությունը մասնագիտական կրթության ոլորտում է՝ ՈԱՇ 6-րդ և 7-րդ մակարդակներին համապատասխան:

Փորձագիտական խումբը կարծում է, որ բուհի պետական կարգավիճակից բխող առանձնահատկությունները լիարժեք չեն դրսևորվում, ինչն առաջացնում է որոշակի դժվարություններ նպատակները և դրանց գերակայությունները սահմանելիս:

ԳՊՀ զարգացման տեսլականը, չնայած առկա ձևակերպմանը, հստակ չէ, ինչը խոչընդոտում է ինչպես միասնական ընկալման ձևավորմանն ու ջանքերի կոնսոլիդացիային, այնպես էլ տեսլականից իրագործելի և չափելի նպատակներ բխեցնելուն:

Գերակա ուղղությունները, որոնք պետք է բխեին տեսլականից և ցույց տային ՌԾ ժամանակահատվածում բուհի զարգացման այն ուղղությունները, որոնք առավել են կարևորվում, փաստացի ձևակերպված են այնպես, որ ընդգրկում են բուհի գրեթե ողջ գործունեությունը: Ըստ էության՝ բուհն այդպիսով չունի սահմանված իրական գերակայություններ:

Գերակա ուղղությունների նման առանձնացմամբ առաջացել է դրանց փոխկապակցման և աստիճանակարգվածության պակաս: Արդյունքում երաշխավորված չէ, որ առանձին գերակայությունների շրջանակում նպատակները, խնդիրներն ու գործողությունները բխում են առաքելությունից և տանում են դեպի տեսլականի իրագործում:

Միևնույն ժամանակ շահակիցների շրջանում չկա միասնական պատկերացում բուհի զարգացման տեսլականի վերաբերյալ: Սա վկայում է տեսլականի և նպատակների ձևավորման միասնական գործուն հարթակի պակասի մասին: Փորձագիտական խումբը, սակայն, դրական է համարում այն, որ բուհի տեսլականն առնվազն մեկ կարևոր բաղադրիչով համահունչ է իր համայնքի տեսլականին:

Այդուհանդերձ, հոգաբարձուների խորհրդում ներկայացված և չներկայացված շահակիցների ազդեցությունը նպատակների ձևավորման վրա ունի ինստիտուցիոնալացման կարիք: Չնայած մեխանիզմների ֆորմալ առկայությանը՝ արտաքին շահակիցների գործունեությունը հիմնականում վերաբերում է բուհի չներդրվող, նպատակների մակարդակում մնացող ձևակերպումներին, մինչդեռ բուհի իրական գործունեությունը հիմնականում որոշվում է գործադիր ղեկավարության կողմից: Արդյունքում առաջանում է որոշակի խզում ձևակերպված հավակնությունների և առավել արդիական խնդիրների միջև: Անցկացվող հարցումներն այս հարցում ևս որոշիչ օգտակարություն չեն ունենում, քանի որ դրանք հիմնականում չեն վերաբերում բուհի զարգացման ուղղությունների որոշմանը:

Ռազմավարական ծրագրի բաժանումը միջնաժամկետ և տարեկան պլանների հիմնականում մեխանիկական է: Ռազմավարության՝ ստորաբաժանումների և աշխատակիցների ամենօրյա գործունեության վերածման այդպիսի մոտեցումը ռիսկային

է, քանի որ նվազում է ռազմավարական մոտեցումների տեսանելիությունը: Արդյունքում՝ առանձին ստորաբաժանումներ և աշխատակիցներ կարող են չունենալ հստակ պատկերացում այն մասին, թե ինչով են իրենք նպաստում բուհի առաքելությանն ու տեսլականի իրագործմանը: Նման իրավիճակում բուհը կարող է ունենալ միայն ինտուիտիվ ենթադրություն, բայց ոչ համոզվածություն այն մասին, որ իր ամենօրյա գործունեությունն ուղղված է իր նպատակներին:

Այդպիսով՝ կարող է առաջանալ ժամանակի հետ մեծացող խզում նպատակների և իրականության միջև: ՌԾ-ում վերանայումներ չանելու մոտեցման պարագայում այդպիսի խզումների առաջացման հետևանքը կարող է լինել ՌԾ-ի՝ որպես գործունեություն պայմանավորող ուղեցույցի թուլացումը:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը կարծում է, որ հաշվի առնելով բուհի առաքելության հիմնականում միասնական ընկալումը շահակիցների շրջանում, դրա համապատասխանությունը ՈԱՇ-ին, նպատակների սահմանման և գնահատման գործընթացների մասին փաստաթղթերում նկարագրված պատկերացումներն ու ընթացակարգը՝ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: ԳՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԳՊՀ կառավարման համակարգի վերին օղակները և դրանց հիմնական գործառույթները սահմանված են կանոնադրությամբ:

Կառավարման բարձրագույն կոլեգիալ մարմինը հոգաբարձուների խորհուրդն է: Ինչպես պարզվեց այցի ընթացքում, վերջինս, բացի տարբեր նախագծեր հաստատելուց և հաշվետվություններ լսելուց, երբեմն հանդես է գալիս նախաձեռնություններով: Նման դեպքերը, սակայն, հազվադեպ են: Միևնույն ժամանակ բուհում դժվարացան հիշել հոգաբարձուների խորհրդի կողմից որևէ նախագծի մերժման դեպք, իսկ խորհրդի և կոլեգիալ կառավարման մյուս մարմինների նիստերի արձանագրությունները չեն արտացոլում քննարկումների ընթացքը:

Կոլեգիալ կառավարման մարմինների՝ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի աշխատակարգերը և որոշումների կայացման ընթացակարգերը սահմանված են առանձին փաստաթղթերով:

Կազմակերպական կառուցվածքը և ուսումնական ստորաբաժանումների կազմը հաստատված են հոգաբարձուների խորհրդի կողմից: Հիմնական ստորաբաժանումների գործունեությունը կարգավորվում է առանձին կանոնադրություններով և կանոնակարգերով: Մշակված են պաշտոնների անձնագրեր և նկարագրեր: Գրեթե բոլոր պաշտոնները համալրված են համալսարանի հիմնական աշխատակիցներով:

Տարեկան ֆինանսական նախահաշվով նախատեսվում է միջոցների հատկացում գրեթե բոլոր ուղղություններով՝ ուղղված բոլոր ստորաբաժանումներին: Կատարողականներում, սակայն, որոշ ուղղություններով առկա են զգալի շեղումներ:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Ներքին շահակիցները ներգրավված են կոլեգիալ կառավարման մարմիններում: Այդուհանդերձ, շահակիցների իրական ազդեցությունը կոլեգիալ կառավարման մարմինների կազմում ո՛չ տեսանելի է արձանագրությունների միջոցով, ո՛չ էլ հնարավոր եղավ փաստել այցի ընթացքում կոնկրետ օրինակներով:

Ի լրումն տարբեր գործընթացներին շահակիցների մասնակցություն ենթադրող մի շարք ընթացակարգերի՝ առկա է որոշումների նախագծերի քննարկման առցանց հարթակ: Վերջինիս մասին, սակայն, շահակիցների որոշ խմբեր տեղյակ չէին կամ երբևէ չէին օգտագործել:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ՌԾ-ն բաժանված է երկու միջնաժամկետ ծրագրերի՝ 2017-2019 և 2019-2022 թթ.: Առկա են տարեկան պլաններ:

Տարեկան պլաններ ունեն նաև ստորաբաժանումները: Ֆակուլտետներն ունեն նաև միջնաժամկետ պլաններ: Դրանցում նախատեսված են գործունեության գնահատման ցուցիչները: Ֆակուլտետների ռազմավարություններ, սակայն, չկան, իսկ ստորաբաժանումների գործունեությունը, ինչպես պարզվեց այցի ընթացքում, ՌԾ հետ հստակորեն կապված չէ:

Որպես պլանների մշտադիտարկման մեխանիզմ՝ սահմանված են ցուցիչներ, սակայն դրանք ոչ միշտ են չափելի:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Տվյալների հավաքագրման հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնք անցկացվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների տարբեր խմբերի շրջանում: Արտաքին միջավայրի համակարգված և կանոնավոր ուսումնասիրություն և տարբեր գործոնների ազդեցության գնահատում, այդուհանդերձ, չի իրականացվում: Զուգահեռաբար օգտագործվում են անձնական կապերը՝ որպես արտաքին միջավայրից ազդակների ստացման աղբյուր:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ԳՊՀ ՌԾ և ներբուհական իրավական ակտերի մշակման, ընդունման, հրապարակման և փոփոխման ընթացակարգը, ինչպես նաև ՈԱ ձեռնարկը սահմանում են քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության որոշ սկզբունքներ:

Գնահատման հիմնական գործիքը հարցումներն են: Բարելավումները, սակայն, ինչպես պարզվեց այցի ընթացքում, հիմնականում փոքր ընթացակարգային փոփոխություններ են:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Թեև սահմանված և ներդրված են տեղեկությունների հավաքագրման այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են հարցումները և տարբեր ձևաչափերի քննարկումները, նախատեսված չեն մեխանիզմներ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատելու համար: Հավաքագրվող տեղեկությունների հավաստիությունը ԳՊՀ-ում փաստացի փորձում են բարձրացնել հարցումների մասնակիցների թվի և տեղեկությունների աղբյուրների բազմազանեցման միջոցով:

Հավաքագրված քանակական և որակական տվյալների խոր վերլուծություն չի իրականացվում. չեն օգտագործվում վիճակագրական վերլուծական գործիքներ: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ էապես ավելի մեծ ծավալի տեղեկություններ են հավաքագրվում, քան փաստացի կիրառվում:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

ՈԱ ձեռնարկով նախատեսված են տեղեկատվության հրապարակումներն անուղղակիորեն գնահատող մեխանիզմներ, մասնավորապես՝ հարցում: Միաժամանակ, թեև հիմնականում ինտուիտիվ, գնահատվում է տարբեր կապուղիներով ստացվող հետադարձ կապի ծավալը, ինչի արդյունքում բուհը գնահատում է, թե որ կապուղիներն են առավել արդյունավետ եղել ԳՊՀ վերաբերյալ տեղեկությունների տարածման գործում: Հրապարակումների բովանդակությունը, սակայն, չի գնահատվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևոր է համարում այն, որ ԳՊՀ-ում սահմանված են կառավարման համակարգի տարբեր օղակների գործառույթները՝ հոգաբարձուների խորհրդի կանոնադրական գործառույթներից մինչև առանձին պաշտոնների անձնագրեր: Այդպիսով առնվազն նախադրյալներ են ստեղծված կառավարման համակարգի անխափան գործունեության համար:

Փորձագիտական խումբը նաև դրական է համարում կոլեգիալ կառավարման մարմինների առկայությունն ու մասնակցությունը բուհի կառավարմանը: Միևնույն

ժամանակ կոլեգիալ կառավարման մարմինների նիստերի արձանագրությունները և այցի ընթացքում վերհանված տեղեկությունները թույլ չեն տալիս փաստել, որ այդ մարմինների միջոցով ապահովվում է կառավարման լիարժեք կոլեգիալությունը: Առանձնակի մտահոգիչ է հոգաբարձուների խորհդրի կողմից նախաձեռնողականության պակասը՝ հատկապես հաշվի առնելով հոգաբարձուների խորհրդի բարձր ներուժը, որը ձևավորվել է շահակիցների տարբեր խմբերի ներկայացուցիչների ներգրավման շնորհիվ:

Կառավարման համակարգի՝ ռեսուրսներով ապահովվածության կրիտիկական խնդիրներ չեն վերհանվել. տարեկան ֆինանսական նախահաշվով նախատեսվում է միջոցների հատկացում բոլոր ստորաբաժանումներին: Սակայն մտահոգիչ է, որ կատարողականներում առկա են լինում զգալի շեղումները, որոնք չեն առաջացնում փոփոխություններ:

Գնահատելով ռազմավարական ծրագրից միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի, գործողությունների համահամալսարանական և ստորաբաժանումների պլանների բխեցման մոտեցումը՝ փորձագիտական խումբն այնուամենայնիվ կարծում է, որ ծրագրերի մեխանիկական բաժանումը կարող է վտանգել ռազմավարության առանցքային գաղափարների փոխանցումը կատարողներին:

Փորձագիտական խումբը նաև ողջույների է համարում սահմանված ցուցիչների առկայությունը՝ որպես պլանների մշտադիտարկման մեխանիզմ, սակայն խնդրահարույց է համարում դրանց երբեմն ոչ չափելի բնույթը, որը կարող է մշտադիտարկումը դարձնել ձևական, ինչի արդյունքում չեն կատարվի անհրաժեշտ եզրակացություններ:

Արտաքին միջավայրի համակարգված և կանոնավոր ուսումնասիրություններ և տարբեր գործոնների ազդեցության գնահատումներ չիրականացնելը փորձագիտական խումբը համարում է ռիսկային: Ռիսկային է նաև տեղեկությունների աղբյուրների դիվերսիֆիկացմանը զուգահեռ գործիքների դիվերսիֆիկացման պակասը: Այս ամենի արդյունքում կառավարման համակարգի գործունեության հիմքում արտաքին աշխարհից ստացվող հավաստի տվյալների պակաս է առաջանում, ինչը հանգեցնում է ոչ տվյալահեն որոշումների կայացման:

Փորձագիտական խումբը դրական է համարում ԳՊՀ ՌԾ և ներբուհական իրավական ակտերի մշակման, ընդունման, հրապարակման և փոփոխման ընթացակարգի առկայությունը, ինչպես նաև հարցումների միջոցով ընթացակարգերի արդյունավետությունը գնահատելու ձգտումը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարծում է, որ անցկացվող հարցումները կարող են ցույց տալ շահակիցների գոհունակության աստիճանը քաղաքականությունից, բայց ոչ դրա արդյունավետությունը:

Գնահատելի է հավաքագրվող տեղեկությունների աղբյուրների և ծավալի ավելացման ձգտումը, սակայն մտահոգիչ է, որ դրան զուգահեռ դեռևս չեն ներդրվել մտից տեղեկությունների հետ կապված գործընթացների գնահատման մեխանիզմներ: Այդպիսով վտանգվում է տեղեկությունների հավաքագրման թիրախայնությունն ու կիրառելիությունը: Արդյունքում ԳՊՀ-ն մեծ ռեսուրս է ծախսում տեղեկությունների հավաքագրման վրա, սակայն այն համաչափորեն չի վերլուծվում և օգտագործվում:

Ելից տեղեկությունների կապուղիների արդյունավետությունը գնահատվում է, սակայն փորձագիտկան խումբը կարծում է, որ կապուղու արդյունավետությունը փոխկապված է բուն տեղեկության բովանդակության հետ, և առանց բովանդակության

արդյունավետության գնահատման՝ կապուղու արդյունավետության գնահատումը կարող է հավաստի չլինել:

Եզրահանգում: Հաշվի առնելով ԳՊՀ կառավարման համակարգի տարբեր օղակների գործառույթների հստակ սահմանված լինելը, կոլեգիալ կառավարման մարմինների ներուժը, կառավարման համակարգի ապահովվածությունը ռեսուրսներով՝ փորձագիտական խումբը համարում է, որ ԳՊՀ-ն բավարարում է 2-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: ԳՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ԳՊՀ առաքելությունը ներառում է Գեղարքունիքի մարզի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ բնական, հումանիտար և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստումը:

ԳՊՀ-ն հավատարմագրման նախորդ գործընթացից հետո շարունակել է իրականացնել բնական, հումանիտար և հասարակական գիտությունների ուղղություններով մասնագիտական կրթական ծրագրեր՝ ՀՀ ՈԱԾ-ի 6-րդ (բակալավր) և 7-րդ (մագիստրոս) մակարդակներում՝ առկա և հեռակա ուսուցման ձևերով: Ընդ որում՝ բակալավրիատի հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերի թիվը վերջին տարիներին կրճատվել է 3-ով: Արդյունքում ԳՊՀ-ն ներկայումս իրականացնում է առկա ուսուցմամբ բակալավրիատի 16, հեռակա ուսուցմամբ՝ 13, մագիստրատուրայի՝ 13 ծրագիր: Բուհն իրականացվում է նաև հետբուհական 1 գիտակրթական ծրագիր: 2021թ.-ը ներառյալ, 24 տարի շարունակ բուհը թողարկել է 7607 շրջանավարտ (4446 առկա ուսուցմամբ բակալավրիատի, 2304-ը հեռակա ուսուցմամբ բակալավրիատի և 857-ը՝ մագիստրատուրայի):

ԳՊՀ-ն իր 2017-2022թթ. ռազմավարական ծրագրում ամրագրված «Համալսարանի առաքելությունը» բաժնում ներառել է նաև «հումանիտար գիտություններ» ուղղությունը՝ դրանով իսկ արձագանքելով նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում

այդ առթիվ կատարված դիտարկմանը և համապատասխանեցնելով ԳՊՀ առաքելությունը փաստացի իրավիճակին։

ԳՊՀ-ում կրթական գործընթացի կազմակերպման, այդ թվում՝ ՄԿԾ-ների մշակման կամ բարելավման հիմքում, ի թիվս այլնի, դրվել են ՀՀ ՈԱՇ-ը և դրա հիման վրա ԳՊՀ-ի կողմից 20.03.2021թ. հաստատված՝ «ԳՊՀ բարձրագույն կրթության որակավորումների շրջանակը»։ Այնուամենայնիվ, առկա է որոշակի անհամապատասխանություն ԳՊՀ-ի հաստատած որակավորումների շրջանակի (որը սահմանում է գիտելիքներ–կարողություններ - հմտություններ) և ՀՀ ՈԱՇ-ի միջև, որը սահմանում է գիտելիքներ - հմտություններ (մասնավորապես՝ գիտելիքի կիրառման հմտություն, հաղորդակցման և ընդհանրական իմացական հմտություններ) - կարողունակությունը (մասնավորապես՝ ինքնուրույնություն և պատասխանատվություն)։ Օրինակ, «Իրավագիտություն» ՄԿԾ-ները (6-րդ և 7-րդ մակարդակներում) հստակ տարանջատված չեն «հմտությունները» և «կարողությունները», և դրանք բովանդակային առումով չեն համապատասխանում ՀՀ ՈԱՇ-ին։ Բացի այդ, ԳՊՀ-ի հաստատած ՈԱՇ-ը նույնությամբ կրկնում է օրինակ՝ «Իրավագիտություն» ՄԿԾ-ների «Ավարտելու պահանջները» բաժնում (կետ 9) տեղ գտած գիտելիք-կարողություն-հմտություն բովանդակությունը։

Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցի առաջարկությունների հիման վրա ԳՊՀ-ն վերանայել է ՄԿԾ-ները։ Արդյունքում բոլոր ՄԿԾ-ների նկարագրերում սահմանված են ընդունելության և ավարտելու պահանջները, ծրագրի նպատակները, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, կիրառելի մեթոդները, անհրաժեշտ ռեսուրսները (այդ թվում՝ ՊԴԿ), սովորողի հետագա ուսման հնարավորությունները և մասնագիտական գործունեության բնագավառները, ինչպես նաև ծրագրի կայունությունն ապահովելու մոտեցումները։

Բակալավրիատի և մագիստրատուրայի ՄԿԾ-ների վերջնարդյունքները շատ դեպքերում տառացիորեն նույնական են, իսկ երբեմն տարբերությունները սահմանված են ընդամենը մեկ-երկու բառերի միջոցով (օրինակ՝ «Իրավագիտություն» բակալավրիատի և մագիստրատուրայի ՄԿԾ-ներում Ա1, Ա4 (բ), (գ), (դ), Ա5 (մեծամասամբ), Ա6, Ա7, Բ1, Բ2, Գ1, Գ2 նույնությամբ կրկնվում են)։

ՄԿԾ-ներում նախատեսված են կամընտրական դասընթացներ, որոնք զգալիորեն հարստացնում են ծրագիրը (հատկապես մագիստրատուրայի դեպքում)։ Սակայն կամընտրական դասընթացներից, որպես կանոն, փաստացիորեն իրականացվում է միայն մեկը, ինչի պատճառը, ըստ հանդիպումների ժամանակ արտահայտած մտքերի, ուսանողների թվի պակասն է։

Աշխատաշուկայում պահանջված գործնական հմտությունները ՄԿԾ-ներում ներառելու մեխանիզմներից է գործատու դասախոսների ներգրավումը։ Այդուհանդերձ, ըստ փորձագիտական այցի ընթացքում ստացված տեղեկությունների, մարզում հասանելի գործատուների թիվը փոքր է։

Դասընթացների հաջորդականության տրամաբանությունն ընտրվում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մասնագիտության առանձնահատկությունները։ Այնուամենայնիվ, ինչպես պարզ դարձավ ծրագրերի ուսումնասիրության, դասալսումների և փորձագիտական այցի ընթացքում, բովանդակային առումով առկա են որոշ միջառարկայական կրկնություններ։

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ԳՊՀ-ի բոլոր կրթական ծրագրերում ընդգրկված դասընթացների առարկայական ծրագրերում նկարագրված են դասավանդման և ուսումնառության, ինչպես նաև ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդները: Դասալսումների ընթացքում պարզ դարձավ, որ դասավանդման ավանդական ձևերը զուգակցվում են (որքան հնարավոր է) նորագույն մեթոդների և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հետ: Բացի այդ, ինչպես փորձագիտական այցի ընթացքում էլ հաստատվեց, ուսանողների փոքր քանակը հնարավորություն է տալիս անհատական մոտեցման ավելի շատ կիրառման համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսներին է թողնված մեթոդների ընտրությունը. կախված լսարանից՝ մեթոդները կարող են փոխվել, իսկ ուսանողները կարող են հանդես գալ առաջարկներով մեթոդի ընտրության հարցում:

Այնուամենայնիվ, տարբեր կառուցամասերի կոմպետենցիաների համար հաճախ թվարկված են բազմազան մեթոդներ՝ առանց դրանք տարբերակելու ըստ վերջնարդյունքի: Այսինքն՝ մեթոդները բազմազան են, սակայն նույնական են տարաբնույթ կոմպետենցիաների համար: Բացի այդ, ներկայացված նյութերի ու փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև դասավանդման և ուսումնառության մեթոդները բազմազան են, սակայն հիմնականում կիրառվում են այն մեթոդները, որոնք ուղղված են գիտելիքի ձեռքբերմանը: Օրինակ, որոշ հանձնարարականների ուսումնասիրությունը՝ թեստեր ու խնդիրներ, կամ պրեզենտացիաների ներկայացում, ուղղված են տեսական գիտելիքի յուրացմանը և որոշակի քննադատական մտածողության ձևավորմանը, սակայն հմտությունների ու կարողությունների մի շարք կարևոր ասպեկտներ չեն լրացվում դրանցով: Մեկ այլ օրինակ է սեմինար պարապմունքների մեթոդները (որոնք նկարագրված են դասընթացների նկարագրերում), որոնք ևս հիմնականում ուղղված են գիտելիքի յուրացմանը և որոշակի կիրառելիությանը, սակայն ոչ ամբողջական հմտություն և կարողություն ձևավորելուն:

Դասախոսներին մեթոդական օգնություն տրամադրելու նպատակով ԳՊՀ-ում պարբերաբար իրականացվել են վերապատրաստման դասընթացներ ինչպես ՀՀ մասնագետների, այնպես էլ եվրոպական գործընկեր ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

«Իրավագիտություն» ՄԿԾ-ում կարևոր խնդիր է անհատական աշխատանքները, որոնք առավելապես ռեֆերատի բնույթ են կրում, իսկ անհատական աշխատանքի թեմաները ըստ առանձին դասընթացների (օրինակ, քրեական իրավունք, քաղաքացիական իրավունք և այլ) հիշեցնում են դասընթացի քննական հարցաշարի հարցեր:

Ընդունվել է Գավառի պետական համալսարանում կրթական վերջնարդյունքներով պայմանավորված մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և ուսումնական մոդուլներին հատկացվող կրեդիտների հաշվարկի կարգ, սակայն դեռևս չի իրականացվում ուսումնառողի բեռնվածության հստակ հաշվարկ և պլանավորում:

Ըստ ինքնավերլուծության՝ ԳՊՀ-ում դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության գնահատման կարևոր միջոց են ուսանողների շրջանում անցկացվող հարցումները, ինչպես նաև դասալսումները: Սակայն բացակայում են դրանց հիման վրա կատարված փոփոխությունների տեսանելի օրինակները:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Ուսումնական պլաններում ներառված դասընթացների, մոդուլների առարկայական ծրագրերում առանձնացվել է գնահատման մեթոդների վերաբերյալ համապատասխան աղյուսակը, որտեղ նշվում են այն բոլոր չափանիշները, որոնց բավարարման դեպքում ուսանողը կարժանանա համապատասխան գնահատականի: Գնահատման չափորոշիչները, սակայն, հաստակ չափելի չեն: Օրինակ՝ այն սահմանում է՝ «81-100 միավոր ստանում է, եթե. սովորողը խորապես ըմբռնել է պահանջվող գիտելիքները, ինչպես նաև ձեռք է բերել այլ գիտելիքներ ինքնուրույն որոնողական, հետազոտական աշխատանքի շնորհիվ (Ա); սովորողը ի վիճակի է ձեռքբերած գիտելիքների հիման վրա ձևավորած կարողությունները անթերի կիրառել բազմաբնույթ նոր իրավիճակներում: Մշտապես կատարում և ներկայացնում է որակյալ աշխատանք (Բ); սովորողը դրսևորում է յուրահատուկ մոտեցումներ, ցուցաբերում անհատական ապացուցողական համակարգ, ունի վերլուծական, համադրական մտածողություն, տալիս է գնահատականներ նոր տեսությունների վերաբերյալ, վերլուծությունները կատարում է միանգամայն ինքնուրույն»:

Գնահատման մեթոդները նույնն են և կրկնվում են տարբեր կառուցամասերի համար, օրինակ, բանավոր հարցում, գրավոր հարցում, թեստային գնահատում, ինքնուրույն աշխատանքի հրապարակային պաշտպանություն, առաջադրանքների, վարժությունների, գնահատում, մասնակցության գնահատում:

Բուհում գործարկվել է «ԳՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման ու գնահատման կարգ»-ը, որը 2019թ.-ին ենթարկվել է բովանդակային փոփոխությունների: Նախորդ փորձագիտական զեկույցում առկա խորհրդատվության հիման վրա կատարված փոփոխություններով հիմնականում շեշտադրվել են բովանդակային բաղադրիչները՝ նորարարական, հետազոտական և ստեղծագործական, որոնք նաև գրախոսի կարծիքում որպես գնահատման բաղադրիչներ են առանձնացվել:

Նշված կարգի 4-րդ բաժնում ղեկավարի պարտականությունների ուսումնասիրությունը (մասնավորապես՝ ա) աշխատանքի, թեզի առաջադրանքի կազմում, հիմնախնդրի ձևակերպում, գ) թեմայի վերաբերյալ գրականության և այլ աղբյուրների ընտրություն) վտանգում են ուսանողի ինքնուրույն հետազոտության իրականացումը:

Մշակվել և գործարկվում են ԳՊՀ ուսանողների և դասախոսների ուղեցույցներ կրեդիտային համակարգում սովորելու և դասավանդելու սկզբունքների ու առանձնահատկությունների վերաբերյալ: 2021 թ. հաստատվել է ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգը (փոփոխություններով): ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգը, ԳՊՀ էթիկայի նորմերը տեղադրված են ԳՊՀ պաշտոնական www.gsu.am կայքէջում, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին լինել առավել իրազեկ:

Գիտելիքների օբյեկտիվ և թափանցիկ գնահատման նպատակով յուրաքանչյուր դասընթացի սկզբին դասախոսը ծանոթացնում է այն բոլոր չափանիշներին, որոնց բավարարման պարագայում նշանակվում է գնահատական:

Դասավանդման, գնահատման որակից և ուսումնական գործընթացից ուսանողների բավարարվածության աստիճանի ուսումնասիրման նպատակով նրանց շրջանում անցկացված հարցումների արդյունքում փաստում են ուսանողների գոհունակությունը Համալսարանում կիրառվող գնահատման, ուսուցման և ուսումնառության մեթոդներից: Բացի այդ հարցումները, գնահատման մեթոդների արդյունավետության վերաբերյալ այլ վերլուծություններ չներկայացվեցին:

Կորոնավիրոսով /COVID-19/ պայմանավորված՝ առցանց ուսուցման գործընթացում ԳՊՀ դասախոսները կիրառում են ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման՝ հեռավար կրթության առանձնահատկություններին հարմարեցված ձևեր:

Ուսանողի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման հարցում կարևորվում են ուսումնական, արտադրական, գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաները, որոնք առանձին մասնագիտությունների դեպքում սկսվում է առաջին կուրսում: Հիմնականում ուսանողները պրակտիկա անցնում են գործընկեր կազմակերպություններում, որոնց հետ կնքվում են համապատասխան պայմանագրեր: Ավարտին ուսանողները կազմում են պրակտիկայի հաշվետվություններ՝ ըստ նախապես հաստատված ծրագրի և գնահատվում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգի համաձայն:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

ԳՊՀ-ում գործում է Գավառի պետական համալսարանի կողմից առաջավոր փորձի ուսումնասիրման, վերլուծության և համադրման (բենչմարքինգի) ընթացակարգ (հաստատված է 25.02.2015թ.): Համալսարանն իրականացնում է ԳՊՀ-ի և այլ բուհերի կրթական ծրագրերի համադրելիության ապահովման քաղաքականություն: Ըստ ինքնավերլուծական զեկույցի, համեմատական վերլուծություն իրականացնելիս՝ հաշվի է առնվում այն հանգամանքը, որ համադրվող յուրաքանչյուր բուհ ունի իր յուրահատուկ կառուցվածքը և ուղղվածությունը, մարդկային և նյութական ռեսուրսների առանձնահատկությունները, այլ հատկանիշներ: Սակայն ինչպես նախորդ հավատարմագրման ժամանակ, այնպես էլ այս անգամ որոշ ՄԿԾ-ների դեպքում հստակ չէ, թե ինչ մեթոդաբանություն է կիրառվել, ինչ բաղադրիչներ են փոխառվել, չի հիմնավորվում, թե ինչու հենց այդ բուհերն ընտրվել, իսկ բուհերն ընտրելիս, թեև նշված է, որ հաշվի են առնվել դրանց առանձնահատկությունները, սակայն չի հիմնավորվում, թե հաշվի առնվել են՝ ինչն է աշխատում, ինչը՝ ոչ: Դասընթացների բովանդակության մակարդակով մանրամասն բենչմարքինգ իրականացված չէ: Բացակայում են փորձի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ վերլուծությունը և փաստացի փոփոխության իրականացման առկայությունը: Փոփոխությունների տեսանելի օրինակներ և բարելավումներ ներկայացված չեն:

«Համակարգչային ճարտարագիտություն» կրթական ծրագրում, սակայն, հաշվի առնելով ուսումնասիրությունների արդյունքները՝ իրականացվել են առարկայական համալրումներ: Բակալավրի կրթական ծրագիրը համալրվել է «Արհեստական բանականություն և մեքենայական ուսուցում», «Սերվերային ծրագրավորում» դասընթացներով, մագիստրոսական կրթական ծրագիրը՝ «Նեյրոնային ցանցեր» «Մեծ տվյալների մշակման բաշխված համակարգեր», դասընթացներով, փոփոխություններ են կատարվել «Web ծրագրավորում», «Ծրագրավորում C#», «Ինֆորմացիայի մշակման ժամանակակից համակարգեր և տեխնոլոգիաներ», «Արհեստական բանականության ծրագրագործիքային միջոցներ» առարկայական ծրագրերում: Մի քանի դասընթացների գծով իրականացվում են թիմային նախագծեր՝ Տվյալների բազաների նախագծման տեխնոլոգիաներ, Web ծրագրավորում, Սերվերային ծրագրավորում, Արհեստական բանականություն և մեքենայական ուսուցում: Փոփոխություններ են տեղի ունեցել նաև մի շարք մասնագիտական առարկաների ժամաքանակներում:

Համակարգչային ճարտարագիտություն բաժնի ուսումնական պլանները կազմելիս հիմք է ընդունվել նաև «Computer Engineering Curricula 2016, CE2016» Association for Computing Machinery (ACM) and the IEEE Computer Society. միջազգային փաստաթուղթը:

ԳՊՀ-ում ներդրված կրեդիտային ECTS համակարգը և համաեվրոպական ձևաչափի հավելվածը ամբողջությամբ համադրելի են կրեդիտների կուտակման ու փոխանցման եվրոպական համակարգի հետ: Բուհն իրականացնում է 21 միջազգային ծրագրեր, որից 13-ը դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունության ծրագրեր են: 2021թ. դրությամբ ԳՊՀ 117 ուսանող և 211 դասախոս մասնակցել է շարժունության ծրագրերի (դասախոսություններ և վերապատրաստումներ), իսկ Համալսարանում արտերկրից ուսումնառության շրջան է անցել 3 ուսանող՝ Իսպանիայից, Հունաստանից և ԳՊՀ-ում դասախոսել կամ հետազոտություն են անցկացրել 43 դասախոս՝ Գերմանիայից, Իսպանիայից, Բուլղարիայից, Հունգարիայից, Հունաստանից և ԵՄ այլ երկրներից:

ԳՊՀ-ի միջազգային ծրագրերի միջոցով իրականացվում են Համալսարանի դասախոսների և ուսանողների ակադեմիական փոխանակումներ: Ելքը շատ է, սակայն մուտքը՝ քիչ:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԳՊՀ-ում գործում է ՄԿԾ-ների մշակման, հաստատման, իրականացման ընթացքի մշտադիտարկման և բարելավման ընթացակարգը: Ծրագրերի մշտադիտարկումն իրականացվում է նաև դասալսումների միջոցով, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների քննարկումը, վերլուծությունը, ավարտական աշխատանքների թեմաների և դրանց կատարման համապատասխանությունը սահմանված նորմերին, արտաքին և ներքին շահակիցների շրջանում իրականացվող հարցումները, ստացված կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումները:

Ուսումնական և արտադրական պրակտիկաների հաշվետվությունների հիման վրա պարզաբանվում են կրթական ծրագրերի արդյունավետությունը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանությունը: Մշտադիտարկման ու գնահատման

արդյունքները ներկայացվում են դեկանների և ամբիոնների վարիչների տարեկան հաշվետվություններում: Սակայն այս ամենը համակարգային և պարբերական բնույթ չեն կրում: Պարբերականության վերաբերյալ նախատեսված է ՄԿԾ-ի բարելավման կարգում՝ առնվազն տարին մեկ անգամ վերանայվում են, սակայն հիմնավորող փաստաթղթեր չկային այդ մասին:

Ուսանողները բարելավման գործընթացում ներգրավված են դասընթացի վերաբերյալ հարցումների, իսկ դասախոսները՝ ամբիոնի մակարդակով քննարկումների միջոցով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի ղեկավարության և անձնակազմի ջանքերն ուղղված ՄԿԾ-ների բերալավմանը և բուհի առաքելության իրականացմանը: Բուհը մեծ հեղինակություն է վայելում ողջ Գեղարքունիքի մարզում՝ բոլոր շահակիցների շրջանում և առանցքային դեր ու կարևորություն ունի մարզի համար:

Փորձագիտական խումբը գնահատում է, որ նախորդ հավատարմագրումից հետո իրականացվել են որոշակի բարելավումներ ՄԿԾ-ների առումով, սակայն դրանք՝ ՀՀ ՈԱՇ-ին և բուհի առաքելությանը համապատասխանեցման առումով պետք է շարունակվեն: Հատկապես հրատապ է մագիստրատուրայի և բակալավրիատի մասնագրերում հստակ տարբերակում մտցնելը այդ մակարդակների վերջնարդյունքների և դրանով պայմանավորված՝ այլ բաղադրիչների առումով, այլապես, դա կարող է հանգեցնել կրթության շարունակականության ոչ պատշաճ ընկալմանը, արտաքին շահակիցների կողմից բակալավրի և մագիստրոսի կոմպետենցիաների սխալ ընկալմանը: Բացի այդ, անհրաժեշտ է ամրապնդել ՄԿԾ-ների առանձին կառուցամասեի (Ա, Բ, Գ) վերջնարդյունքների՝ միմյանց միջև, ինչպես նաև՝ դրանց ու ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչների միջև տրամաբանական կապը: Կարևոր է, որ ՄԿԾ-ների վերջնարդյունքները լինեն հստակ, չափելի և իրատեսական՝ դասավանդման և ուսումնառության ու գնահատման մեթոդների շղթայի ու առկա ռեսուրսների պայմաններում: ԳՊՀ-ն պետք է քայլեր ձեռնարկի ՄԿԾ-ների վերջնարդյունքների վերաձևակերպման (նաև հաշվի առնելով հեռավար ուսուցման առկայությունը), ՈԱՇ-ին համապատասխանեցման, վերջնարդյունքների հստակության և չափելիության, բակալավրիատի և մագիստրատուրայի ՄԿԾ-ների վերջնարդյուքնների տարբերակման ուղղությամբ:

Նախընտրելի է, որ ուսումնառության վերջնարդյունքները ներկայացնեն ծրագրի ընդհանուր դրույթները և բնութագրական առանձնահատկությունները: Մինչդեռ, նշված ՄԿԾ-ները աչքի են ընկնում ուսումնասառության վերջնարդյունքների նախընտրելի չափից շատ լինելով, ինչն ուռճացնում է և վտանգի տակ կարող է դնել դրանց չափելիությունը, առկա ժամաքանակի, ծավալների, դասախոսների ծանրաբեռնվածության, կիրառվող մեթոդների բազմազանության պայմաններում, և ստուգման տեսանկյունից դրանց փաստացի իրագործման հնարավորությունը:

Թեև ուսումնառության և դասավանդման մեթոդները բազմաձև են, ուղղված են խրախուսելու ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրելու խմբային աշխատանքի հնարավորություններ, ԳՊՀ-ում դրանց փաստացի և լիարժեք ապահովումը խնդրահարույց է նախ՝ ոչ հստակ վերջնարդյունքներով

պայմանավորված՝ նաև մեթոդների ընդհանրական ու բոլոր Ա, Բ, Գ կոմպետենցիաների համար նույնական լինելով: Բացի այդ, համավարակի պայմանները, դասախոսների ծանրաբեռնվածությունը և նույն դասախոսի կողմից մի քանի ծավալուն դասընթաց դասավանդելը (որոնցից յուրաքանչյուրը պահանջում է հատուկ մեթոդներ մշակել ու պատրաստվել), անհրաժեշտ վերապատրաստումներ չանցնելը, դասընթացների ծավալը և հատկացվող ժամաքանակը և մի շարք այլ գործոններ ևս պետք է հաշվի առնվեն, որ հնարավոր լինի ապահովել այդ բազմազան մեթոդների փաստացի կիրառելիությունը:
Այն, որ մեթոդները ուղղված են ստուգելու հիմնականում գիտելիքները, կարող է վտանգել նախանշված վերջնարդյունքների ձեռքբերումը:

Ողջունելի է, որ նախորդ հավատարմագրման խորհրդատվության հիման վրա «ԳՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման ու գնահատման կարգ»-ում դրական փոփոխություններ են կատարվել, որով հիմնականում շեշտադրվել են բովանդակային բաղադրիչները՝ նորարարական, հետազոտական և ստեղծագործական, որոնք նաև գրախոսի կարծիքում որպես գնահատման բաղադրիչներ են առանձնացվել: Սակայն գրախոսականին ներկայացվող պահանջներում կարևոր է նաև նախատեսել բաղադրիչներ, որոնք ուղղված են ընդհանուր վերջնարդյունքների ստուգմանը, օրինակ՝ ուսանողի՝ ինքնուրույն աշխատելու, տվյալներ մշակելու և եզրակացություններ անելու կարողության գնահատումը, աշխատանքում գործնական առաջարկությունների առկայության գնահատումը և այլն, ինչն էլ ավելի կբարձրացնի գործընթացի արդյունավետությունը և կնպաստի ուսանողի ինքնուրույն հետազոտական կարողությունների զարգացմանը:

Թեև ողջունելի է բենչմարքինգի իրականացման իրավական հիմքերի սահմանումը և փաստացի իրականացումը, սակայն բովանդակային առումով փոփոխությունների կարիք դեռևս կա: Հարկավոր է հստակեցնել պարբերականությունը, մեթոդաբանությունը, բուհերի ընտրության չափանիշը, բենչմարքինգի բուն իրականացումը՝ համադրվող բուհի խնդիրների և համադրվող ՄԿԾ-ի մարտահրավերներն ու հնարավորությունները վերլուծելը: Ներկայացված փաստաթղթերում բացակայում էին բովանդակային վերլուծությունները, ինչը սահմանափակում է համեմատական վերլուծությունների արդյունավետությունը և լավագույն փորձի հնարավոր ներդրումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում հարցումների, ամփոփիչ ատեստավորման հաշվետվությունների, դեկանների հաշվետվությունների և կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման այլ մեխանիզմների առկայությունը, սակայն դրանց հիման վրա բարելավման փաստեր ներկայացված չեն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա ԳՊՀ-ն վերանայել է իր ՄԿԾ-ները, բարեփոխել է ՄԿԾ-ների մշակման և հաստատման քաղաքականությունը, ուսանողների հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով վերանայել է ավարտական աշխատանքների պատրաստման և պաշտպանության կարգը, մշակել և ներդրել է ընտրովի և ֆակուլտատիվ դասընթացների կարգեր, ՄԿԾ-ների մասնագրերում փորձ է կատարվել վերջնարդյունքներին համապատասպանեցնել գնահատման մեթոդները, կրթական ծրագրերի մշտադիտարկման նպատակով ԳՊՀ-ում

իրականացվում են ամբիոնային քննարկումներ և հարցումներ շահակիցների շրջանում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Համալսարանում ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության քաղաքականությունն իրականացվում է համակարգված ձևով: Մշակվել է գործողությունների համալիր ծրագիր, որն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում: Առկա են դպրոցների և քոլեջների, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության հետ կնքված համագործակցության հուշագրեր: Կազմակերպվում են փոխայցելություններ մարզի հանրակրթական, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ աշակերտներին, քոլեջում սովորողներին ԳՊՀ մասնագիտություններին ծանոթացնելու և մասնագիտական կողմնորոշման հարցում աջակցելու նպատակով: Կազմակերպվում են հանդիպումներ ուսուցիչների, դպրոցների տնօրենների հետ՝ ըստ տարածաշրջանների, անցկացվում են աշխատաժողովներ՝ ուսումնամեթոդական և առարկայական օգնություն ցուցաբերելու, դպրոցների կողմից առաջարկված թեմաների պարզաբանման նպատակով:

Համալսարանն անցկացնում է աշակերտական առարկայական օլիմպիադաներ, շարադրությունների մրցույթներ, ինտելեկտուալ մրցաշարեր: Աշակերտներն ըստ նախասիրությունների մասնակցում են տարբեր դասախոսությունների, իսկ համավարակի պայմաններում Համալսարանի վիրտուալ լսարաններում մասնակցում են առցանց դասերի և միջոցառումների:

ԳՊՀ-ն անցկացնում է «Բաց դռների» օրեր՝ ԳՊՀ բոլոր ֆակուլտետներում անցկացնելով դասեր, հանդիպումներ, միջոցառումներ: Գեղարքունիքի մարզի շատ դպրոցների աշակերտներ իրենց բնագիտական առարկաների գործնական պարապմունքներն անցկացում են ԳՊՀ բնագիտության լաբորատորիայում, իսկ պատմության հատուկ դասը՝ ԳՊՀ Վարշամ Ավետյանի անվան պատմության թանգարանում:

Համալսարանի կայքում զետեղված է նաև «Դիմորդ» բաժինը, որտեղ առկա է ընդունելությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկատվություն: Հալասարանն ունի ակվտիվորեն վարվող ֆեյսբուքյան էջ:

Համալսարանում բակալավրիատի ընդունելությունն իրականացվում է ՀՀ կառավարության «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ»-ին

համապատասխան: Բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման ընդունելությունը իրականացվում է հանրապետական միասնական քննությունների արդյունքում, իսկ հեռակա ուսուցման դեպքում համալսարանն ինքն է կազմակերպում և իրականացնում ընդունելության քննությունները՝ ՀՀ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության կանոններին և Գավառի պետական համալսարանում հեռակա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության կարգին համապատասխան[5]: Մագիստրատուրայի ընդունելություն իրականացվում է ՀՀ բուհերում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգին և Գավառի պետական համալսարանում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգին համապատասխան: Այսպիով, բակալավրիատի կրթական ծրագրերով առկա ուսուցման ընդունելությունը կազմակերպվում և անցկացվում է ԳԹԿ-ի կողմից միասնական կարգով, իսկ հեռակա ուսուցման և մագիստրատուրայի համակարգերում ընդունելությունը կազմակերպվում է համալսարանում՝ կրթության կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված կանոնակարգերի և ԳՊՀ համապատասխան ակտերի հիման վրա:

Չնայած ուսանողների հավաքագրմանն ուղղված հիշյալ միջոցառումների՝ նկատվում է դիմորդների քանակի աստիճանական նվազում՝ կապված սոցիալ-ժողովրդագրական բացասական գործընթացների, տարածաշրջանից արտագաղթի ծավալների աճի հետ:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման տարաբնույթ մեխանիզմներ են գործում Համալսարանում, որոնց իրականացումը անընդհատական գործընթաց է: Ընդունվել և գործում են կրթական ծրագրերի բարելավման գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր, մշակվել են տարբեր հարցաթերթիկներ ուսումնական գործընթացի բաղադրիչների վերաբերյալ՝ որոշակի թիրախային խմբերի շրջանում անանուն՝ թղթային, ինչպես նաև էլեկտրոնային հարցումների անցկացման նպատակով, կազմակերպվում են ոչ ֆորմալ բնույթ կրող հանդիպումներ, կիրառվում են հետադարձ կապի ապահովման բազմաթիվ այլ եղանակներ: Ուսանողների կարիքների վերհանման ուղղությամբ շարունակական աշխատանք է իրականացնում Համալսարանի որակի ապահովման բաժինը, որտեղ մշակվում են հարցաշարեր և իրականացվում անանուն հարցումներ: Ֆակուլտետների որակի ապահովման գծով պատասխանատուները համագործակցում են ԳՊՀ որակի ապահովման բաժնի մասնագետների հետ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց խնդիրներով կարող են դիմել դասախոսներին, ամբիոնների վարիչներին, դեկաններին, պրոռեկտորներին և ռեկտորին: Խնդիրների բարձրաձայնման և լուծման տեսանկյունից ուսանողների օրինական շահերի ներկայացման առումով չափազանց կարևոր է ուսանողական կառույցների դերակատարությունը: Սակայն, ինչպես պարզ դարձավ, խնդիրների վերհանման և լուծման առումով ուսանողական կառույցներն էական

[5] Միտքը վերաձևակերպվել է բուհի դիտարկումների հիման վրա:

դերակատարություն չունեն, ինչը, գուցե, ուսանողական կառույցների մասին թերի իրազեկման խնդիր է:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները տեղեկացված չեն ազդեցության բարձր գործակից ունեցող պարբերականների, դրանցում տպագրմանը ներկայացվող չափանիշների մասին:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Համալսարանը ուսանողներին ցուցաբերում է աջակցություն՝ լրացուցիչ պարապմունքներ անցկացնելով, խորհրդատվություններ տրամադրելով: Այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների նպատակը սովորողների ուսումնառության արդյունքների բարելավումն է, միջանկյալ և ամփոփիչ քննություններին, ստուգարքներին, կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությանը պատրաստված ներկայանալը: Միաժամանակ աջակցություն է ցուցաբերվում ցածր ակադեմիական ցուցանիշներ ունեցող ուսանողներին՝ լրացնելու գիտելիքների պակասը:

Համալսարանում լրացուցիչ խորհրդատվությունները լինում են նախաքննական, նախաավարտական և ակադեմիական ցածր առաջադիմություն ունեցող ուսանողներին տրամադրվող: Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներն անցկացնում են առարկաների դասախոսները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական ղեկավարները, գործընթացին կարող են մասնակցել ամբիոնների վարիչները, առաջատար մասնագետները: Խորհրդատվական պարապմունքների կազմակերպման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է մասնագիտական բոլոր դասընթացներում դասախոսական որակյալ կազմի ներգրավմամբ, ուսանողների ուսումնական կարիքների հաշվառմամբ:

Լրացուցիչ պարապմունքների կազմակերպման գործում ուսանողական կառույցների դերակատարման մասին ինքնավերլուծության մեջ հիշատակում չկա:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Համալսարանում ստեղծված են իրավական և կազմակերպական բավարար հիմքեր, որպեսզի անհրաժեշտության դեպքում ուսումնառողները դիմեն վարչական աշխատակազմին՝ հավելյալ օժանդակություն և ուղղորդում ստանալու նպատակով: Այդ առումով արդյունավետ գործունեություն են ծավալում դեկանատները և ամբիոնները, որոնց հետ ուսանողները բավական ակտիվ հաղորդակցվում են անմիջականորեն, ինչպես նաև էլեկտրոնային փոստի և համացանցային այլ գործիքների միջոցով, իսկ համավարակի տարածմամբ պայմանավորված՝ առցանց ուսուցման պայմաններում ավելի մեծ ծավալների հասավ վարչական աշխատակազմին էլեկտրոնային միջոցներով, առցանց դիմելու գործընթացը: Համալսարանում ուշադրության կենտրոնում են գտնվում ուսման վարձավճարների զեղչերի, տեղափոխությունների, փոխատեղման (ռոտացիայի), վերականգնման, տարկետման, հեռացման, ազատման հետ կապված հարցերը, որոնք

քննարկվում և լուծվում են ուսանողների կողմից ներկայացված դիմումների կամ համապատասխան ստորաբաժանումների զեկուցագրերի հիման վրա: Ուսանողը վարչական աշխատակազմին կարող է դիմել նաև բողոքարկման հարցերով:

Համալսարանի պաշտոնական կայքում, ի թիվս այլնի, զետեղված են նաև «Բակալավրիատի առաջին կուրսի ուսանողի ուղեցույց» և «Մագիստրատուրայի ուսանողի ուղեցույց» փաստաթղթերը, որտեղ զետեղված են վարչակազմի հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեները:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Համալսարանում ընդունվել են կանոնակարգեր, մշակվել են ծրագրեր և հաստատվել են համագործակցային կապեր գործատուների հետ, որոնց նպատակը շրջանավարտների մրցունակության ապահովումն է, մասնագիտական հմտությունների ձևավորումը, աշխատաշուկայում նրանց պահանջարկի բարձրացումն է, շրջանավարտների մասին տեղեկատվական բազայի անընդհատ համալրումը: Շրջանավարտների զբաղվածության ապահովմանը նպաստելու քաղաքականությունը իրականացվում է տարբեր ուղղություններով. գործատուների կարիքների և սպասելիքների ուսումնասիրություն, լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում, համագործակցային հուշագրերի կնքում, աշխատանքի տեղավորման հարցերում աջակցություն, երաշխավորագրերի և բնութագրերի տրամադրում, ապագա գործատուների մոտ պրակտիկայի կազմակերպում, գործատուներին ամփոփիչ ատեստավորման գործընթացում ներգրավում, թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունների տարածում և այլն: Նշված ուղղություններով իրականացվում են քննարկումներ գործատուների մասնակցությամբ, այցելություններ, էքսկուրսիաներ տարբեր կազմակերպություններ, ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ ու դասընթացներ, որոնք կազմակերպվում և անցկացվում են տարբեր բուհերի, գիտական և մշակութային կազմակերպությունների ու կենտրոնների, բանկերի, իրավապահ մարմինների, տարբեր ընկերությունների ներկայացուցիչների հետ համատեղ: Վերջին շրջանում մեծացել են նման շփումները հեռավար եղանակով՝ առցանց հարթակներում:

Գործընթացն իրականացնում է ԳՊՀ համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն): Համալսարանում Կենտրոնի առկայությունը, շրջանավարտների զբաղվածությանը նպաստելու քաղաքականությունը հնարավորություն են տալիս արձանագրելու որոշակի արդյունքներ. Համալսարանի շրջանավարտներն աշխատանքի են անցնում հանրակրթական դպրոցներում, բանկային համակարգում, իրավապահ մարմիններում և հենց Համալսարանում: Համալսարանի շրջանավարտները, մասնակցելով թափուր աշխատատեղերի համար հայտարարված տարբեր մրցույթների, ցուցաբերում են պատշաճ մասնագիտական գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ և հաջողությամբ ընդունվում են աշխատանքի:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանն ակտիվորեն համագործակցում է գործատուների հետ, նրանց ընդգրկում որպես դասընթացավարներ, մասնակից է դարձնում առկա կրթական ծրագրերի մշակմանը և վերամշակմանը,

ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների մշակման աշխատանքներում:

Փորձագիտական այցի ընթացքում նաև պարզ դարձավ, որ ուսանողների շատ քիչ մասն է իրազեկված կարիերայի կենտրոնի մասին: Ուսանողները աշխատանքի տեղավորման հարցերով հիմնականում դիմում են դասախոսներին և ռեկտորին:

Այցի ժամանակ նաև պարզ դարձավ, որ Կենտրոնը՝ որպես առանձին կառուցվածքային միավոր առանձնացված չէ:

Ինքնավերլուծության համաձայն՝ հասարակության սոցիալապես անապահով խավի իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու, նրանց իրավունքների պաշտպանությանը վերաբերող խորհրդատվություններ մատուցելու նպատակով Համալսարանում գործում է իրավաբանական կլինիկա, որը Գեղարքունիքի մարզի բնակիչներին տրամադրում է անվճար իրավաբանական խորհրդատվություն՝ գործընթացին ներգրավելով բուհի՝ իրավաբանական կրթություն ստացող ուսանողներին, այդ կերպ նրանց համար ապահովելով գործնականում տեսական գիտելիքների կիրառման և մասնագիտական որոշակի փորձառության ձեռքբերման հնարավորություն:

Հիշյալ համատեքստում իրավաբանական կլինիկան ևս կարելի է դիտարկել որպես կարիերային նպաստող ծառայություն:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Համալսարանում աշխատանքներ են կատարվում գիտահետազոտական գործընթացի կազմակերպման համար ապահովելու անհրաժեշտ միջավայր, ուսանողներին ներգրավելու հետազոտական աշխատանքներում և զուգորդելու կրթական ու գիտահետազոտական գործընթացները: Առաջնահերթություններից են ուսանող-դասախոս համատեղ գիտահետազոտական գործունեությունը խրախուսող կառուցակարգերի գործարկումը, գիտաժողովներին համահեղինակությամբ գիտական զեկուցումների ներկայացումը և դրանց տպագրությունը ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուներում: Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների մասնակցության ապահովման քաղաքականության իրականացմանը միտված նպատակն ու խնդիրները ձևակերպված են ԳՊՀ հնգամյա ՌԾ-ում և ուսանողական գիտական ընկերության կանոնադրությունում: Համալսարանական և ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերությունների գործունեությունը նպաստում է ուսանողների մասնագիտական որակների զարգացմանը և գիտական հետաքրքրությունների բացահայտմանը, հետազոտական աշխատանքներ կատարելու կարողությունների զարգացմանը: Այդ նպատակով պարբերաբար կազմակերպվում են ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, քննարկումներ և գիտական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումներ: Նման միջոցառումները կրում են ինչպես ներհամալսարանական, այնպես էլ հանրապետական բնույթ:

ԳՊՀ ամբիոններում հաստատված գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղություններով կատարվում են ուսումնասիրություններ, որոնք այս կամ այն կերպ արտահայտվում են մագիստրոսական թեզերում և ավարտական աշխատանքներում: Բանասիրական ֆակուլտետում այդ ուղղություններից երկուսը

դարձել են գիտահետազոտական ծրագրեր և վերաբերում են տարածաշրջանի բանահյուսական նյութերի հավաքմանը ու խոսվածքների գրառմանը:

Փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները տեղեկացված չեն ազդեցության բարձր գործակից ունեցող պարբերականների, դրանցում տպագրմանը ներկայացվող չափանիշների մասին:

Ինքնավերլուծությունից և փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ թույլ է ՈՒԳԸ-ամբիոններ կապը: Ամիոններում չկան ՈՒԳԸ պատասխանատուներ, կապը հիմնականում ապահովվում է ամբիոնների լաբորանտների միջոցով: Առկա չեն ամբիոնների վարիչների կողմից հաստատված ՈՒԳԸ գիտական աշխատանքների թեմատիկաներ:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ուսանողներն իրենց իրավունքները կարող են պաշտպանել հետևյալ համալսարանական կառույցներում. ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ, ռեկտորատ, ֆակուլտետային խորհուրդ, ուսանողական խորհուրդ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողով, ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման հանձնաժողով, ակադեմիական նազնվության դեպքերը քննող հանձնաժողով, այլ: Նշված կառույցներում ընդգրկված են ուսանողներ, որոնց միջոցով էլ ուսանողները կարող են ներկայացնել իրեց բողոքներն ու դժգոհությունները:

Ինքնավերլուծությունում Ուսանողական խորհրդին՝ որպես ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու հիմանական մամնի, բավարար չափով ուշադրություն դարձված չէ:

Փորձագիտական խմբի այցի արդյունքում պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն՝ որպես ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին, պասիվ է, և ուսանողների կողմից չի դիտարկվում որպես իրենց կարիքները բարձրաձայնող և իրավունքները պաշտպանող կառույց: Ուսանողներն իրենց իրավունքների պաշտպանության նպատակով հիմնականում դիմում են ռեկտորին, դեկաններին կամ ամբիոնների վարիչներին, ինչ ևս վկայում է նմանատիպ հարցերում ՈՒԽ-ի պասիվության մասին:

Համալսարանում գործում է ԳՊՀ Ուսանողական խորհրդի կանոնադրությունը, որտեղ, ի թիվս այլնի, կարգավորված են Խորհրդի նպատակները, գործառույթները և իրավասությունը, կառուցվածքը, գործառույթները, ֆինանսական միջոցների տնօրինման կարգը:

Համալսարանում գործում է նաև Գավառի պետական համալսարանի ուսանողների բողոքների և բողոքարկումների քննարկման ու լուծման կարգը (փոփոխություններով):

Ինքնավերլուծության համաձայն՝ թույլ է ուսանողների նախաձեռնողականությունը, նրանց հետաքրքրությունը կառավարման մարմիններում որոշումների կայացման գործընթացների նկատմամբ: Նշվում է նաև, որ միջազգայնացման ռազմավարական փաստաթղթերի և քաղաքականության մշակման գործում ուսանողների պասիվ մասնակցություն ունեն:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Համալսարանում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների և դրանց որակի գնահատման մեխանիզմների արդյունավետությունը որոշվում է ուսանողական հարցումների միջոցով, որն իրականացվում է տարին երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում: Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են ամբիոններում, ֆակուլտետի խորհրդում, ռեկտորատի, գիտական խորհրդի նիստերում, իսկ եթե անհրաժեշտ լինի, կարող են քննարկվել հոգաբարձուների խորհրդում: Քննարկման արդյունքում արվում են եզրահանգումներ ու առաջարկություններ, և դրանց համապատասխան մշակվում և իրականացվում են միջոցառումներ՝ շտկումներ ու բարեփոխումներ կատարելու նպատակով: Կրթության որակի ներքին ապահովման համակարգում ներգրավված են Համալսարանի մի շարք ստորաբաժանումներ, որոնք իրենց լիազորությունների սահմաններում իրականացնում են կրթության որակի ապահովման գործընթացներ: Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների վերաբերյալ ընդունված կանոնակարգերն ու ընթացակարգերը հնարավորություն են տալիս անմիջականորեն արձագանքելու ուսանողների կողմից բարձրացված խնդիրներին և շուտափույթ լուծումներ տալու դրանց:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման գործընթացում որոշակի դերակատարում կարող են ունենալ շրջանավարտները: Սակայն ինքնավերլուծության համաձայն՝ ԳՊՀ շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման աշխատանքները համակարգված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խմբին տրամադրված և փորձագիտական խմբի այցից ստացված տեղեկությունների ուսումնասիրման արդյունքում կարելի է փաստել, որ հաստատությունը աջակցում է ուսանողներին կրթական միջավայրի արդյունավետության ապահովման հարցում: Ուսանողները բավարարված են համալսարանի կողմից տրամադրվող կրթությունից:

Վերջին տարիներին նկատվում է ուսանողների թվի նվազման միտում, ինչը ֆինանսական տեսանկյունից համալսարանի համար մեծ ռիսկ է: Գավառի պետական համալսարանի հիմնական միջոցները ձևավորվում են ուսանողների վարձավճարներից, հետևաբար առկա է տվյալ ռիսկի գնահատման և կանխարգելման անհրաժեշտություն: Թեև համալսարանը ուսանողների հավաքագրման համար կիրառում է մի շարք մեխանիզմներ և համալիր միջոցառումներ, այնուամենայինիվ դրանց կիրառումը չի հանգեցրել ընդունելության ցուցանիշների աճի, ինչը պայմանավորված է նաև օբյեկտիվ հանգամանքով:

Փորձագիտական խումբը կարծում է, որ առկա է տվյալ մեխանիզմների և միջոցառումների արդյունավետության գնահատման և թիրախային լսարանը գտնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտություն:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ առկա են ուսանողների կարիքների վերհանման մի շարք մեխանիզմներ, այդ թվում՝ հարցումներ,

հանդիպումներ, քննարկումներ։ Միևնույն ժամանակ խմբի համար տեսանելի չէր այդ մեխանիզմների կիրառման և արդյունքների վերլուծման պարբերականությունը։

Խնդիրների բարձրաձայնման և լուծման տեսանկյունից ուսանողների օրինական շահերի ներկայացման առումով չափազանց կարևոր է ուսանողական կառույցների դերակատարությունը։ Սակայն, ինչպես պարզ դարձավ, խնդիրների վերհանման և լուծման առումով ուսանողական կառույցներն էական դերակատարություն չունեն, ինչը, գուցե, ուսանողական կառույցների մասին թերի իրազեկման խնդիր է։ Ուսանողական խորհուրդը չի ընկալվում որպես ուսանողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույց, վերջինի և ուսանողների միջև առկա կապը թույլ է։ Փորձագիտական խումբը գտնում է, որ այս առումով համալսարանը պետք է որոշակի քայլեր ձեռնարկի Ուսանողական խորհրդի դերի բարձրացման ուղղությամբ։

Թույլ է կապը ամբիոնների և Ուսանողական գիտական ընկերության միջև։ ՈՒԳԸ հարցերով ամբիոնային պատասխանատուների աշխատանքը համակարգված չէ։ Բացակայում են ամբիոնների կողմից հաստատված ՈԻԳԸ գիտական հոդվածների թեմատիկաները։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները տեղեկացված չեն ազդեցության բարձր գործակից ունեցող պարբերականների, դրանցում տպագրմանը ներկայացվող չափանիշների մասին։ Այս առումով ՈԻԳԸ-ն դասախոսների ներգրավմամբ պետք է իրականացնի լրացուցիչ միջոցառումներ։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում համալսարանի կողմից լրացուցիչ պարապմունքներ անցկացնելու և խորհրդատվություններ տրամադրելու հանգամանքը։ Լրացուցիչ պարապմունքների կազմակերպման տեսանկյունից հարկ է նշել, որ կարևոր դերակատարում պետք է ունենան ուսանողական կառույցները։ Սակայն այս մասին ինքնավերլուծության մեջ հիշատակում չկա։ Համալսարանը պետք է խթանի ուսանողական կառույցների կողմից լրացուցիչ միջոցառումների և պարապմունքների իրականացումը։

Համալսարոնում գործում է Կարիերայի կենտրոնը։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների շատ քիչ մասն է իրազեկված կարիերայի կենտրոնի մասին։ Ոսանողները աշխատանքի տեղավորման հարցերով հիմնականում դիմում են դասախոսներին և ռեկտորին։ Այցի ժամանակ նաև պարզ դարձավ, որ Կենտրոնը՝ որպես առանձին կառուցվածքային միավոր, առանձնացված չէ։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Իրավաբանական կլինիկայի և Կիրմինալիստիկայի լաբորատորիայի առկայությունը։ Իրավաբանական կլինիկան ևս կարելի է դիտարկել որպես կարիերային նպաստող ծառայություն։ Համալսարանը պետք է քայլեր ձեռնարկի Իրավաբանական կլինիկան և Կիրմինալիստիկայի լաբորատորիան նաև գիտահետազոտական նպատակներով օգտագործելու համար։ Թույլ է ուսանողների նախաձեռնողականությունը, նրանց հետաքրքրությունը կառավարման մարմիններում որոշումների կայացման գործընթացների նկատմամբ։ Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման գործընթացում որոշակի դերակատարում կարող են ունենալ շրջանավարտները։ Սակայն ինքնավերլուծության համաձայն՝ ԳՊՀ շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման աշխատանքները համակարգված չեն։ Այս խնդրի

լուծման հարցում էական դերակատարում կարող է ունենալ ԳՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը: Հետևաբար, համալսարանն այս ուղղությամբ պետք է կոնկրետ քայլեր ձեռնարկի:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ համալսարանում առկա են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմներ, համալսարանը նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցի հիման վրա կատարել է որոշակի բարելավումներ, ուսանողները չունեն դժգոհություններ և բավարարված են տրամադրվող կրթությունից, գործում են ուսանողների կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ և վարչական ու դասախոսական կազմը բավական արձագանքող և հասանելի է, համալսարանն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն կրթական միջավայրի բարելավման նպատակով՝ փորձագիտական խումբը կարծում է, որ Գավառի պետական համալսարանը համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

2019 թ.-ին հաստատվել է ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման և խրախուսման կանոնակարգը (փոփոխություններով), որով սահմանվում են տարակարգերը և համապատասխան պահանջները, տեղակալման չափանիշները և դեպքերը:

ԳՊՀ-ում ՊԴ կազմի պաշտոնների տեղակալումն իրականացվում է մրցութային ընտրության միջոցով, որը կարգավորվում է ՀՀ համապատասխան օրենսդրությամբ և բուհի կանոնակարգերով ու ընթացակարգերով, ինչպես նաև կիրառվում է հրավիրյալ դասախոսի ինստիտուտը: Ուսումնաօժանդակ կազմի հաստիքների ձևավորումն իրականացվում է ըստ պաշտոնների անձնագրերի և նկարագրերի, որոնք սահմանում են աշխատողի գործառույթները, իրավունքները և աշխատանքային պարտականությունները:

Համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար դասախոսների հետ կնքվում են աշխատանքային պայմանագրեր՝ հիմնական, ներքին և արտաքին համատեղության, ժամավճարային հիմունքներով: Ժամավճարային հիմունքներով ընդունվում են նաև գիտական վաստակ, աշխատանքային մեծ փորձ,

գործնական հմտություններ ունեցող, գործատու հանդիսացող կամ համապատասխան ոլորտում հայտնի մասնագետներ:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմում ընդգրկված են նաև 21 գործատուներ, ովքեր նպաստում են աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխանող մասնագետների պատրաստման գործընթացին: Բուհում աշխատանքի են ընդունվում նաև ԳՊՀ գերազանցիկ շրջանավարտները:

2007 թ.-ից ընդունված է ԳՊՀ դասախոսների պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունման կարգը:

Բուհի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է ուսանողական հարցումների, դասալսումների, փոխընկերային գնահատումների միջոցով, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների եզրակացությունների հիման վրա, ԳՊՀ դասախոսական կազմի որակի գնահատման միջոցով: Ըստ ինքնավերլուծությունում նեկայացված վիճակագրության՝ արդյունքները գոհացուցիչ են, ուստի՝ ընտրության քաղաքականությունը գնահատվող ժամանակաշրջանի համար արդյունավետ է եղել: Ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրությանարդյունավետության վերաբերյալ վերլուծություններ կատարված չեն:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Հիմք ընդունելով նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում ներկայացված առաջարկությունները, բուհի բոլոր ՄԿԾ-ների մասնագրերում վերանայվել և ամրագրվել են դասախոսական կազմին ներկայացվող անձնային, մանկավարժական և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ: 2020 թվականին բուհում վերանայվել են բոլոր մասնագիտությունների մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերում դասախոսական կազմին ներկայացվող անձնային, մանկավարժական և մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջները: ՊԴԿ նկատմամբ պահանջները սահմանված են տարակարգերի նկարագրերում, դասախոսի աշխատանքի նկարագրում: Դասընթացները դասավանդում են համապատասխան բազային կրթություն ունեցող դասախոսներ: Այնուամենայնիվ, բոլոր ՄԿԾ-ների մագիստրոսի և բակալավրի կրթական աստիճանների համար սահմանված են միևնույն պահանջները: Բացի այդ, ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ ԳՊՀ-ում, ըստ էության, բացակայում են հստակ ձևակերպված մեխանիզմները, որոնցով հնարավոր է ստուգել դասավանդողների համապատասխանությունը սահմանված պահանջներին:

2017թ. մշակվել և գործողության մեջ է դրվել Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի իրականացման կանոնակարգը: Ակադեմիական քաղաքականության բաժնի վերահսկողությամբ իրականացվում են պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրեր, շնորհվում կրեդիտներ, տրամադրվում հավաստագրեր: Որակի ապահովման բաժնի կողմից մշտադիտարկվում է իրականացված վերապատրաստումներից շահակիցների բավարարվածության աստիճանը: Ըստ ինքնավերլուծական զեկույցի, իրականացվող դասալսումների վերաբերյալ ԱՔԲ-ի, ՈԱԲ-ի, մասնագիտական

ամբիոնների կողմից իրականացվում են համատեղ խորքային վերլուծություններ, հրապարակվում արդյունքները, ձեռնարկվում համապատասխան միջոցներ։ Սակայն նման խորքային վերլուծությունների կամ դրանց արդյունքում ձեռարկված կոնկրետ միջոցների վերաբեյալ տեսանելի օրինակները բացակայում են։

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Ներդրվել է ՊԴ կազմի մանկավարժական և մասնագիտական որակի գնահատման համակարգ, որում առանձնացված են միավորներ դասախոսների գիտամանկավարժական, ուսումնամեթոդական և կազմակերպական գործունեության, կրթության և գիտության համակարգի զարգացմանը միտված գործունեության համար, ինչի հաշվառմամբ իրականացվել են խրախուսումներ։ Փորձագիտական այցի ժամանակ նաև հաստատվեց, որ լավագույն ցուցանիշներ ցուցաբերած և բարձր միավորներ ստացած դասախոսները գիտական խորհրդի որոշմամբ ներկայացվում են խրախուսման՝ նյութական, բարոյական, աշխատանքային առաջխաղացման։

ՊԴ կազմի գնահատման մեխանիզմներից է նաև դասալսումների անցկացումը, որի վերաբերյալ կանոնակարգը 2021 թվականի փետրվարին վերանայվել և բարեփոխվել է ԳՊՀ գիտական խորհրդի կողմից։ Բացի այդ, ԳՊՀ-ում վարվում է դասախոսի համապանակ, որում ներկայացվում են յուրաքանչյուր դասախոսի հաջողություններն ու ձեռքբերումները։

ՊԴ կազմի անդամների աշխատանքները հսկվում են ԳՊՀ Ակադեմիական քաղաքականության բաժնի կողմից։ Ստուգվում են դասընթացների ծրագրերի համապատասխանությունը սահմանված պահանջներին, էլեկտրոնային ուսուցման համակարգի համապատասխան տիրույթների համալրումը, ուսումնական ծանրաբեռնվածության ընթացիկ կատարումը։ Դասախոսների գործունեությունը գնահատվում է նաև ուսանողների շրջանում իրականացվող հարցումների միջոցով, ըստ որի ուսումնասիրվում է դասախոսների դասավանդման որակը և ուսումնական գործընթացի արդյունավետությունը։ Առկա է հարցումների կանոնակարգ։ Այսպիսով, անցկացվում են հարցումներ ուսանողների, շրջանավարտների, գործընկերների շրջանում, արդյունքները քննարվում են ամբիոնի, ֆակուլտետի, խորհրդի, ռեկտորատի, գիտխորհրդի նիստերում, հաշվի են առնվում դասախոսների գնահատման միավորների ձևավորման գործում։ Այնուամենայնիվ, թվարկված մեխանիզմների արդյունավետությունը և ազդեցությունը չեն գնահատվում իրականացվող վերլուծություններով։

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցի հիման վրա, 2020 թ. հաստատվել է ԳՊՀ ՊԴԿ որակավորման բարձրացման ծրագրի իրականացման կանոնակարգը (փոփոխություններով), ըստ որի՝ պրոֆեսորադասախոսական կազմի՝ կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման ծրագիրն իրականացվում է հնգամյա շրջափուլով, ընդամենը 30 կրեդիտ բեռնվածությամբ՝ հավասարապես երեք կրթամասերով (մանկավարժական, լեզուներ, մասնագիտական)։ Վերապատրաստման

ծրագիրը սահմանված է 2017-2022 թթ. համար: Այնուամենայնիվ, ոչ բոլոր դեպքերում է, որ վերապատրաստման դասընթացները հիմնվում են ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքների վրա: Այդ կապակցությամբ իրականացված վերլուծությունները բացակայում են, ինչպես և բացակայում են վերապատրաստումների ազդեցության վերաբերյալ բավարար վերլուծությունները:

Առցանց ուսուցման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ իրականացվել են նաև որոշ լրացուցիչ տեխնիկական վերապատրաստումներ:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ՊԴԿ թիվը 2016-2021 թթ. էապես չի փոփոխվել. շուրջ 75 հիմնական և 50 համատեղող՝ փոքր տատանումներով: Դասախոսական կազմի կայունության ապահովմանը նպաստում են աշխատանքի վարձատրության չափի աստիճանական աճը: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում են ստանում բուհի աշխատակիցների երեխա-ուսանողները: Որակական կայունությանը նպաստող միջոց է ԳՊՀ դասախոսի ուղեցույցը կրեդիտային համակարգում ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ:

Հավատարմագրման շրջանակում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գնահատման ենթակա բոլոր ՄԿԾ-ներում («Իրավագիտություն», «Ֆինանսներ», «Համակարգչային ճարտարագիտություն») միևնույն դասախոսը մեծամասամբ դեպքերում դասավանդում է 3-6 ծավալուն դասընթացներ, որոնք, ընդ որում՝ միշտ չէ, որ նույն շիֆրի առարկաների մեջ են մտնում: Բուհը, որպես թույլ կողմ, այս չափանիշի համար նշել է նաև՝ ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի անդամների ծանրաբեռնվածությունը, բազմազբաղ աշխատանքային գործունեությունը:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Բուհում սահմանված են տարբեր տարակարգեր և դրանց համար սահմանված են աշխատավարձի տարբեր չափեր: Համալսարանում գործում է երիտասարդ դասախոսների, աշխատակիցների համար մենթորության կազմակերպման կանոնակարգը: Համալսարանի դասախոսների հոդվածները, գիտահետազոտական աշխատանքի այլ արդյունքներն անվճար հիմունքներով տպագրվում են ԳՊՀ-ի կողմից և տրամադրվում դասախոսներին:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Բուհում վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի ձևավորումը, իրավունքներն ու պարտականությունները, պաշտոնների անձնագրերն ու աշխատանքի նկարագրերը, ընտրությունը, առաջխաղացումը կարգավորվում են ԳՊՀ կանոնադրությամբ, ստորաբաժանումների կանոնադրություններով, կանոնակարգերով ու ընթացակարգերով:

Մշակվել և հաստատվել են վարչական և ուսումնաօժանդակ կազմի անդամների պաշտոնի անձնագրերն ու աշխատանքի նկարագրերը, որտեղ հստակ սահմանված է յուրաքանչյուր աշխատակցի գործառույթների շրջանակը, իրավունքներն ու պարտականությունները, ինչը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ աշխատանքային գործունեություն իրականացնել: Հաստիքացուցակն ամեն տարի հաստատվում է հոգաբարձուների խորհրդի կողմից: Վարչական աշխատակազմը 13 հոգի է, ուսումնաօժանդակը՝ 66 հոգի:

Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակն ապահովվում է մի շարք մեխանիզմներով. դրանցից են ստորաբաժանումների գործողությունների պլանը, մշտադիտարկման պլանը, կատարված աշխատանքների վերաբերյալ ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կիսամյակային և տարեկան հաշվետվությունները, մասնակցությունը վերապատրաստումներին, դասախոսների և ուսանողների կողմից տրված գնահատականները, խրախուսումը և այլն: Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին իրենց գործառույթների շրջանակում հաշվետվություն են ներկայացնում վարչական և ուսումնաօժանդակ կազմի բոլոր աշխատակիցները: Հաշվետվությունները քննարկվում են ռեկտորատի անդամների կողմից և գնահատվում: Ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվող հարցումների միջոցով գնահատվում է նրանց բավարարվածությունը ռեկտորատի, դեկանատի, ամբիոնի, գրադարանի, որակի ապահովման բաժնի և այլ բաժինների աշխատանքներից:

Դատողություններ: Ուսումնասիրելով ԳՊՀ փաստաթղթերը և փորձագիտական այցի ընթացքում ստացված տեղեկությունները՝ փորձագիտական խումբը կարող է փաստել, որ ԳՊՀ-ն, ընդհանուր առմամբ, ապահովված է համապատասխան մասնագիտական որակներով օժտված պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: Կրթական ծրագրերը հիմնականում սպասարկում են համապատասխան որակավորումն ունեցող, գիտական կոչում և աստիճան ունեցող դասախոսներ:

Թեև բոլոր ՄԿԾ մասնագրերում վերանայվել և ամրագրվել են դասախոսական կազմին ներկայացվող անձնային, մանկավարժական և մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ՝ հաշվի առնելով կոնկրետ ծրագրի վերջնարդյունքները, սակայն, ըստ էության, բացակայում են հստակ ձևակերպված մեխանիզմները, որոնցով հնարավոր է ստուգել դասավանդողների համապատասխանությունը սահմանված պահանջներին: Բացի այդ, միմյանցից տարբերակված չեն բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերում դասախոսական կազմին ներկայացվող պահանջները:

Թեև բուհն օգտագործում է ՊԴ կազմի պարբերաբար գնահատման տարբեր գործիքներ, այդ թվում՝ դասալսումներ, հարցումներ ուսանողների, շրջանավարտների, գործընկերների շրջանում, այնուամենայնիվ, թվարկված մեխանիզմների արդյունավետության և ազդեցության գնահատման վերաբերյալ խորքային վերլուծություններ գրեթե չկան: Բացի այդ, առնվազն ներքին գնահատումները և ներքին շահակիցների սոցհարցումները բուհում առկա խիստ մտերմիկ մթնոլորտում (ուսանող-դասախոս, դասախոս-դասախոս և այլ), ինչը փաստվեց այցի ընթացքում, օբյեկտիվ իրականությունը վերհանելու տեսանկյունից կարող են խնդրահարույց լինել:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ բուհը գիտակցում է դասախոսների զարգացման անհրաժեշտությունը: Թեև նախորդ գնահատման զեկույցի առաջարկությունների հիման վրա դասախոսների վերապատրաստման գործընթացն առավել որոշակիացվել է և շեշտադրվել է դասախոսների վերապատրաստման կարիքների վերհանումը և դրանց հիման վրա վերապատրաստման ծրագրերը կազմելը, սակայն դեռևս բավարար չէ վերապատրաստումների հիմնավորվածությունը և դրանք՝ ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխանությունը, ինչպես նաև չկան վերապատրաստումների արդյունավետությունը գնահատող վերլուծություններ: Դրական գնահատելով վերապատրաստումների իրականացման պատրաստակամությունը՝ փորձագիտական խումբն, այնուամենայնիվ, կարծում է, որ միայն ներքին ուժերով վերապատրաստելը սահմանափակում է ՊԴ կազմի հնարավոր զարգացումը:

Գովելի է պրակտիկ և հարուստ փորձ ունեցող աշխատողների ներգրավվածությունը՝ կրթական վերջնարդյունքներին ապահովման տեսանկյունից: Այնուամենայնիվ, ինչպես նշվել է նախորդ գնահատման զեկույցում, ՊԴ կազմի կայունությունը ռիսկային է, հաշվի առնելով մեկ դասախոսի կողմից 3-8 դասընթացներ դասավանդելը, քանի որ մեկ անձի դուրս գալով (տարբեր պատճառներով)՝ վտանգի տակ է դրվելու մի քանի դասընթացների դասավանդման հնարավորությունը կամ նույնիսկ շարունակականությունն ու որակը: Ուստի, բուհը պետք է գործուն քայլեր ձեռնարկի նոր դասախոսներ ներգրավելու ուղղությամբ:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ԳՊՀ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի հաստիքները հիմնականում համալրված են, և նրանց գործառույթները հստակ սահմանված են համապատասխան փաստաթղթերում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՊՀ-ն ապահովված է համապատասխան մասնագիտական որակներով օժտված պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով, մշակված են նրանց ընտրության, ձևավորման, ազատման համար համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր, գործում են պրոֆեսորդասախոսական կազմի կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: ԳՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Համալսարանի ռազմավարական ծրագրով նախատեսվում է հետազոտության ուղղությունների զարգացում: ՄՈՒՀ-ի ռազմավարության մեջ որպես գերակա ուղղություն

սահմանված է կրթության և գիտահետազոտության ինտեգրումը: Հոգաբարձուների խորհրդի համոզմամբ գիտությունը պետք է դառնա ՄՈՒՀ-ի առաջնահերթ ուղղություններից, հատկապես մարզային հիմնախնդիրների ուղղությամբ հետազոտություններ իրականացնելու առումով:

Ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում, հաջորդ ռազմավարական ծրագրում պլանավորվում է ՄՈՒՀ-ի առաջ խնդիր դնել գիտության զարգացման և տեղական հիմնախնդիրների հետազոտության ուղղությունները:

ՄՈՒՀ-ում առկա են միջազգային փորձ ունեցող դասախոսներ, որոնք հիմնականում աշխատում են համատեղությամբ և ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում:

Համալսարանը ունի ԲՈՀ-ի կողմից հաստատված գիտական հոդվածների ժողովածու, ինչը կարևոր նախապայման է գիտության և հետազոտության զարգացման համար:

ԳՊՀ-ի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն ունեն արտոնագրեր և գյուտի հեղինակային իրավունքներ:

Համալսարանում ցանկություն կա նաև ավելացնելու գիտահետազոտական զարգացման բյուջեն, սակայն դեռևս կոնկրետ քայլեր այդ ուղղությամբ չեն իրականացվում: Մենագրության տպագրությունները չեն ֆինանսավորվում ՄՈՒՀ-ի կողմից, սակայն եղել են դեպքեր, որ հիմնական աշխատողների կողմից պատրաստված մենագրությունը համալսարանի աջակցությամբ ֆինանսավորում է գտել Գավառի քաղաքապետարանի կողմից:

Առկա է գիտության պատասխանատուի պարտականություններ կատարող, սակայն, այդ հաստիքը համատեղվում է նաև այլ աշխատանքների հետ:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Փորձագիտական այցելության արդյունքում քննարկումների ժամանակ, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի մոտեցմամբ կարճաժամկետ գիտահետազոտական ծրագրերը իրականացվում են ամբիոնների կողմից, երկարաժամկետ ծրագրերը պլանավորվում են ռազմավարական ծրագրով, միջնաժամկետ ծրագրերը ամրագրված են փաստաթղթերում շատ ընդհանրական գծերով:

ՄՈՒՀ-ն ունի գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու պոտենցյալ. ամբիոններից մի քանիսը ակտիվ գիտագործնական աշխատանքներ են իրականացնում, մասնավորապես պատմության ամբիոնը, բնագիտության ֆակուլտետի ամբիոնները, բանասիրության ֆակուլտետի ամբիոնները: Սակայն, այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ ՄՈՒՀ-ի աշխատակիցները և ուսանողները տեղեկացված չեն ամբիոնների գիտահետազոտական թեմաների վերաբերյալ և նրանց մի մասը գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված չեն: Ամբիոններում առկա են որոշ խմբային հետազոտական աշխատանքներ, սակայն ոչ բոլոր ամբիոններում են կարճաժամկետ հետազոտական ծրագրերը իրականացվում խմբային եղանակով: Միևնույն ժամանակ, մի կողմից, ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրով հատուկ կարևորություն հատկացնելով

համալսարանի գիտահետազոտական գործունեությանը, այդուհանդերձ բացակայում են որևէ փաստաթղթերով ամրագրված հետազոտական պլանների մշակման, կարճաժամկետ նպատակների, առանցքային ցուցանիշներին հասնելու ուղղությունների և ժամատախտակի, և նպատակներին հասնելու գործիքակազմի վերաբերյալ գործողությունների պլանները:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՄՈՒՀ-ում ամբիոնների մակարդակում գիտահետազոտական թեմաներ առաջ են բերում ինչպես ամբիոնները՝ ըստ դասախոսների մասնագիտացման, դուրս բերված խնդիրների և նախասիրությունների, այնպես էլ գործատուներից ստացված առաջարկությունների, կարիքների դուրս բերման միջոցով. գործատուներն առաջարկություններ են ներկայացրել համալսարանի մագիստրոսների գիտահետազոտական թեմաների վերաբերյալ:

Վերջին տարիներին համալսարանի դասախոսները շահել են ԳՊԿ թեմատիկ գիտական ծրագիր և մեկ ծրագիր իրականացնելու են համատեղությամբ: Մշակվել են երկու նորմատիվային ակտեր՝ ուղղված գիտահետազոտական աշխատանքների կանոնակարգմանը, մասնավորապես գիտական գործունեության իրականացման և գիտահետազոտական միասնական հայեցակարգ, որտեղ ներկայացված են ընդհանուր բնույթի մոտեցումները, ուղղությունները և կառուցակարգերը:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՄՈՒՀ-ի դասախոսների և ուսանողների հետազոտության միջազգայնացման բարձրացման նպատակով համալսարանի կողմից իրականացվում են միջազգային կոնֆերանսների մասին տեղեկատվության փոխանցում շահակիցներին: Ուսանողների կողմից միջազգային գիտական կոնֆերանսներում տպագրություններ առկա չեն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը չի իրականացրել միջազգային ամսագրերում համալսարանի ներքին շահառուների հոդվածների տպագրման ֆինանսավորում:

Թեր համագործակցելով գիտահետազոտական գործունեություն իրականացնող մի շարք տեղական կառույցների հետ, մասնավորապես ՀՀ ԳԱԱ Բունիաթյանի անվան ԳՀԻ, ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի և այլ կառույցների հետ՝ տպագրվել են հոդվածներ, առկա չեն միջազգային գործընկերների հետ նմանատիպ համագործակցության դեպքեր: Վերջին երեք տարիների ընթացքում ՄՈՒՀ-ում իրականացվել են ծրագրեր միջազգային ֆինանսավորմամբ, մասնավորապես՝ Ռեֆայն և Աբիոնետ ծրագրերը, որոնք, սակայն, միայն անուղղակի ազդեցություն են ունեցել գիտության միջազգայնացման վրա:

Համաձայն ԳՊՀ կողմից ներկայացված վիճակագրական փաստաթղթերի, միջազգային գիտական ամսագրերում առկա են հրապարակումներ: 2019 թվականների ընթացում ՄՈՒՀ-ի դասախոսների և ուսանողների կողմից իրականացվել է 8 գիտական հոդվածի հրապարակում, իսկ 2020թ. ընթացքում՝ 10, սակայն որոնց միայն մի մասն է միջազգային գիտական շտեմարաններում կամ պետության կողմից թեկնածուական և

դոկտորական աշխատանքներ գրելու համար ընդունելի ամսագրերում: Հրապարակումների զգալի մասի հիմքում ընկած մեթոդաբանությունը տարբերվում է ընդունված ժամանակակից հետազոտական մեթոդներից, որոնք, որպես կանոն, պահանջվում են միջազգային ցիտվող ամսագրերի կողմից: 2020թ. ընթացքում առկա են նաև 5 միջազգային կոնֆերանսների մասնակցություն և հրապարակումներ:

Միջազգային ՄՈՒՀ-երի հետ դասախոսների փորձի փոխանակման ծրագրեր են իրականացվել՝ Բուլղարիայի, Իսպանիայի, Հունգարիայի, Գերմանիայի համալսարաններում, որոնք, սակայն, դեռևս չեն օգտագործվում գիտության միջազգայնացմանը նպաստելու համար:

Այդուհանդերձ, միջազգային ծրագրերով ձեռքբերված կապերը դեռևս չեն օգտագործվում համատեղ գիտագործնական ծրագրեր իրականացնելու համար:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Համալսարանում գործնական պարապունքների, լաբորատորաներում գիտափորձերի, ավարտական և մագիստրոսական թեզերի և գիտամանկավարժական պրակտիկայի առկայությունը հնարավորություն է տալիս ուսանողներին իրականացնել գիտահետազոտական աշխատանքներ, դասախոսների հետ համատեղ հետազոտություններ իրականացնել և ապահովել որոշակի փոխկապակցման մեխանիզմներ: Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր, պարզ է դառնում, որ ՄՈՒՀ-ում ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքների նկատմամբ ցածր նշաձող է սահմանված. աշխատանքներում հիմնականում օգտագործված չեն ժամանակակից աղբյուրներ, հետազոտության քանակական և որակական մեթոդներ:

Համալսարանում ամբիոնների դասախոսների հետ համատեղ իրականացվում են ուսանողական կոնֆերանսներ: Լավագույն ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը ուսանողները ներկայացնում են զեկույցների տեսքով, ինչպես նաև որոշ դեպքերում դրանց արդյունքները հրապարակվում են գիտական ամսագրերում:

Գիտահետազոտական պրակտիկայի արդյունավետությունը չափվում է բնութագրերի ստուգման, օրագրերի, ուսանողների և գործատուների կենդանի շփումների միջոցով, հաշվետվության որակով: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ պրակտիկաների իրականացման որակից ինչպես համալսարանի պատասխանատու աշխատակիցները, այնպես էլ ուսանողները գոհ են և վերջին շրջանում բարելավմանն ուղղված քայլեր չեն ձեռնարկվել: Այդուհանդերձ, պրակտիկայի օրագրերի և հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ գիտահետազոտական պրակտիկան չի ապահովում հետազոտական կարողությունների ձևավորում կամ մեթոդների իմացություն:

Առանձին դեպքերում դասախոսները իրենց հետազոտական կամ գիտական աշխատանքների ընթացքում ձեռքբերված փորձը կիրառում են ուսումնական գործընթացներում գիտափորձերի, գործնական աշխատանքների, տեսքով, իսկ որոշ դեպքերում դասախոսները նաև ուսումնական պլաններում փոփոխություններ են առաջարկել գիտագործնական ձեռքբերումների արդյունքում: Օրինակ ՄՈՒՀ-ում

առաջարկվել է սոցիալական ձեռնարկատիրության առարկայի ներմուծումը, ինչը հետազոտական աշխատանքների արդյունքում դուրսբերված արդյունքների հետևանքով է եղել:

Դատողություններ: ԳՊՀ-ում գիտահետազոտական գործունեության հստակ իրականացման պլան սահմանված չէ, իսկ ռազմավարության մեջ ձևակերպված գերական ուղղությունները շատ ընդհանրական են: Չնայած ՄՈՒՀ-ի՝ գիտահետազոտական ուղղության զարգացումը կարևորելու մոտեցմանը՝ տվյալ նպատակներին ամբողջությամբ հասնելու համար քայլեր չեն ապահովվում: Համալսարանում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնությունները արտահայտող, թեև ոչ հստակ, տեսլական, որի իրականացումը, սակայն, վտանգվում է՝ առանց կոնկրետ քայլերի հաջորդական իրականացման պլանի:

ՄՈՒՀ-ը Էրազմուս+ և այլ միջազգային ծրագրերով ձեռքբերված կապերը չի օգտագործում համատեղ գիտագործնական գործունեություն իրականացնելու համար: Համալսարանի ակտիվ անդամների նախաձեռնությամբ իրականացվում են գիտագործնական աշխատանքներ, սակայն դրանք սակավաթիվ են: Ողջունելի է, որ ՄՈՒՀ-ում SS ամբիոնում առկա է հետազոտական, պրակտիկ և ուսումնական գործընթացների փոխկապակցվածության փորձ, ինչը նպաստում է ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության փոխկապակցմանը:

ՄՈՒՀ-ում առկա են միջազգային փորձ ունեցող դասախոսներ, որոնք հիմնականում աշխատում են համատեղությամբ և ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում:, սակայն կարող են կարևոր գործառույթ իրականացնել ՄՈՒՀ-ի գիտահետազոտական զարգացման համար՝ իրականացնելով փորձի փոխանակում և համատեղ ծրագրերի իրականացում համալսարանի հիմնական դասախոսական կազմի հետ համատեղ:

ՄՈՒՀ-ի հետազոտության իրականացման միջազգայնացման խոչընդոտ է նաև դասախոսների շրջանում լեզվի իմացության ոչ բավարար մակարդակը: Գիտության զարգացմանը, որպես օժանդակություն, կարող է լինել դասախոսական կազմի լեզվի իմացության մակարդակի բարձրացումը և լրացուցիչ անգլերեն լեզվի դասընթացների կամ մակարդակի սահմանումը: Ժամանակակից հետազոտական մեթոդներին ծանոթ չլինելը նույնպես էական խոչընդոտ են հանդիսանում հետազոտական գործունեության զարգացման համար:

ՄՈՒՀ-ում առկա է գիտական ժողովածու, որտեղ հրապարակվում են դասախոսների և ուսանողների հիմնական գիտական արդյունքները, սակայն հրապարակումների միայն մի մասն էբխում այժմյան հիմնախնդիրներից կամ ամբիոնների կարճաժամկետ ռազմավարական ծրագրերից: Չափորոշիչների խստացման և առավել խիստ գրախոսման կիրառումը ոչ միայն կբարելավի գիտական հոդվածների ժողովածուի հոդվածների որակը, այլև կնպաստի ԳՊՀ-ում ակտիվ հետազոտությամբ զբաղվող շահակիցների նախապատրաստմանը միջազգային հեղինակավոր ամսագրերում տպագրվելուն:

Համալսարանում գիտության և հետազոտության զարգացման ինստիտուցիոնալ ստորաբաժանում առկա չէ: Ֆոնդահայթայթմամբ զբաղվող կոնկրետ մասնագետ չկա և այդ գործառույթով զբաղվում են ռեկտորը, որակի ապահովման բաժինը, արտաքին կապերի

բաժինը՝ համատեղությամբ: Որոշ գիտահետազոտական գործընթացներ կորդինացնում է գիտության պատասխանատուն, ով համատեղում է պարտականությունը այլ հաստիքի հետ: Ֆոնդահայթայթման մասնագետի բացակայությունը ՄՈՒՀ-ին հնարավորություն չի տալիս հետազոտական գրանտային ծրագրեր գտնել արտասահմանյան աղբյուրներից, իսկ դասախոսների և համալսարանի միջին օղակի ղեկավարների ծանրաբեռնվածությունը թույլ չի տալիս վերջիններիս զբաղվել զուգահեռաբար այս խնդրով:

Չնայած ՄՈՒՀ-ում ներդրել են գիտահետազոտական ծրագրերում ակտիվ մասնակցության գնահատման բալային չափանիշ, որի արդյունքում դասախոսները խրախուսվում են, ինչպես նաև առկա է միջազգային հրապարակումների էական աճ, այդուհանդերձ գիտության գծով պատասխանատու աշխատակիցները չէին տիրապետում դրանց վիճակագրությանը, մասնավորապես ինչքանով են աճել կամ նվազել գիտական աշխատանքները և հրապարակումները, որքան հոդվածներ կան հրապարակված ազդեցության գործակից ունեցող ամսագրերում և այլ կարևոր տեղեկատվություն, ինչպես նաև նպատակներին հասնելու համար իրականացվելիք հետագա քայլերի հաջորդականությունը:

Գիտագործնական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը կարող է նպաստել գիտական գործունեության առավել հստակ ստանդարտների մշակումը, ուսանողների կողմից իրականացվող հետազոտությունների նվազագույն պահանջների սահմանումը, մագիստրոսական թեզերում և ավարտական աշխատանքներում ուսումնասիրություններ իրականացնելու մեթոդական ցուցումների կազմումը, դասախոսների համար հետազոտության արդի մեթոդների թեմայով պարբերաբար վերապատրաստումների իրականացումը:

Դրական գնահատելով համալսարանում գիտության և հետազոտությունների ակտիվացմանն ուղղված քայլերի իրականացումը, փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում գիտահետազոտական աշխատանքների իրականացման աճի դանդաղ տեմպերը, ինչպես նաև չհամակարգված և չքարտեզագրված մոտեցումը, որը կարող է խոչընդոտել հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի նպատակների իրականացմանը:

Ճիշտ է, ՄՈՒՀ-ը այս տարվանից սահմանել է առավել ակտիվ դասախոսների խրախուսման մեխանիզմ, սակայն վերջինիս գնահատումը դեռևս անհնարին է իրականացնել՝ վիճակագրության բացակայության պատճառով:

Եզրահանգում: Հաշվի առնելով ՄՈՒՀ-ում հետազոտական նպատակների ընդհանրական լինելը, գործողությունների հստակ ծրագրի պակասը, գիտահետազոտական աշխատանքների համակարգման գործառույթների ոչ հստակությունը, միջազգային գիտահետազոտական գործող համագործակցությունների բացակայությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ՄՈՒՀ-ը գործում է երեք մասնաշենքերից կազմված համալիրում: Առկա են վերանորոգված լսարաններ, լաբորատորիաներ, բակային տարածքներ, որտեղ նույնպես կարելի է իրականացնել բաց դասեր և դասախոսություններ, գրադարան՝ երկու մասնաճյուղերով և ընթերցասրահով: Բոլոր ֆակուլտետներում առկա են մի շարք համակարգչային լսարաններ և պրոյեկտորներ, առկա է տեխնիկապես համալրված մարզադաշտ: Համալսարանն ունի նաև բուժկետ, հանրակացարան, սննդի կետեր, ինչը ապահովում է ուսանողների, դասախոսների, Երևանից և այլ մարզերից ժամանող դասախոսների կացություն և անվտանգ միջավայր: Համալսարանի ողջ տարածքում առկա է WiFi կապ:

Համալսարանի լաբորատորիան օգտագործվում է ինչպես ուսանողների, այնպես էլ դպրոցների աշակերտների համար փորձեր և դասեր իրականացնելու համար, ինչը միանգամից կրկնակի դրական ազդեցություն է ունենում՝ օժանդակելու գործընկեր կրթական հաստատություններին ռեսուրսների օգտագործման հնարավորությամբ, ինչպես նաև ՄՈՒՀ-ի ապագա պոտենցյալ շահակիցներին համալսարանի միջավայրի հետ ծանոթացնելու և ինտեգրելու:

ՄՈՒՀ-ում վերջերս բացվել է Սմարթ կենտրոն կոչվող լսարանը, որը բազմաֆունկցիոնալ լսարան է հագեցած համակարգչային տեխնիկայով, կահույքով, պրոյեկտորով, որտեղ հետագայում նախատեսում են իրականացնել տարբեր ֆորմատի միջոցառումներ: Ներկայումս, քանի որ լսարանը նոր է, դեռևս ակտիվ միջոցառումներ չեն իրականացվել և արդյունքները գնահատել չհաջողվեց:

Օտար լեզուների ֆակուլտետում առկա է լինգաֆոնային կաբինետ՝ հագեցած ժամանակակից համակարգիչներով և կահավորմամբ, ինչը հնարավորություն է տալիս մասնագիտական միջոցառումներ իրականացնել:

Նախորդ հավատարմագրման ընթացքում արձանագրվել էր, որ գրադարանային ֆոնդի շուրջ 1%-ն է թվայնացված: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ գրադարանի գրքերի ֆոնդի մոտ 10%-ն է թվայնացվել: Սակայն, գրադարանային ֆոնդը ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ գրականությունը հին է և, չհաշված մի քանի օտարերկրա լեզվով գրքերի, որոնք ձեռք էին բերվել գրանտային միջոցներով: Ուսանողները նույնպես բարձրացրեցին նոր գրականություն ունենալու մասին ցանկություն և հաստատեցին դրա կարևորությունը:

Բացի ֆիզիկապես առկա շենք, շինությունների և տեխնիկայի, ՄՈՒՀ-ն ունի նաև էլեկտրոնային հարթակների միջոցով դասավանդման հասանելիություն, էլեկտրոնային գրադարան: Դեռևս 2011 թվականից համալսարանում գործում է e-learning.gsu հարթակ, որի

միջոցով իրականացվում են համալսարանի օնլայն դասապրոցեսները՝ նաև զումի զուգահեռաբար օգտագործմամբ[6]:

Էլեկտրոնային հարթակի առկայությունը օգնեց համալսարանին համավարակի տարածման վաղ փուլում արագ անցում կատարել օնլայն ուսուցմանը: Էլեկտրոնային հարթակում առկա են ներբեռնված առարկաների մասին անհրաժեշտ տվյալները: Ուսանողները ըստ խմբերի ունեն մուտքային տվյալներ, ինչի միջոցով հասանելիություն են ստանում անհրաժեշտ տվյալներին և ծանոթանում նյութերին:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

ՄՈՒՀ-ի ֆինանսական միջոցների պլանավորումը իրականացվում է տարեկան կտրվածքով: Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը յուրաքանչյուր տարի իրականացնում է եկամուտների և ծախսերի նախահաշիվ, որտեղ արտացոլվում են հաջորդ տարվա հիմնական սպասվելիք մուտքերը և նախատեսվող ծախսերը: Համալսարանի մուտքերի ավելի քան 60%-ը գոյանում է վճարովի ուսման ծառայություններից, իսկ ելքերի ավելի քան 65%-ը ուղղված է աշխատավարձերին: Այցելության ժամանակ պարզվեց, որ աշխատավարձային ֆոնդի մեջ մտնում են նաև այլ բուհերից և հիմնարկներից հրավիրված մասնագետների թրեյնինգների և սեմինարների վճարները, սակայն դրանք չեն կազմում էական հանրագումար:

Գավառի պետական համալսարանի հիմնական միջոցները ձևավորվում են ուսանողների վարձավճարներից, սակայն վերջին տարիներին նկատվում է ուսանողների թվի նվազման միտում: ԳՊՀ-ն չի ստանում պետական բազային ֆինանսավորում. պետական բյուջեից ֆինանսավորումը վերաբերում է միայն ուսման վարձերը վճարելուն:

Համալսարանը, չնայած, որ պետական է, սակայն պետական ֆինանսավորում չունի: Պետության կողմից միայն տրամադրվում է անվճար ուսման հնարավորություն որոշ ուսանողների համար: Համալսարանը բարերարների, պետական և ոչ պետական կազմակերպությունների և տարբեր ծրագրերի միջոցով ջանք է գործադրում ապահովելու մաքսիմալ անվճար ուսման տեղեր:

Վերջին տարիների բյուջեի պատկերը ունի բացասական միտում: Դա հիմնականում պայմանավորված է ուսանողների թվաքանակի պակասով, ինչը բխում է տարածաշրջանային միգրացիայի խնդրից:

Մենագրության տպագրությունները չեն ֆինանսավորվում ՄՈՒՀ-ի կողմից, սակայն եղել են դեպքեր, որ հիմնական աշխատողների կողմից պատրաստված մենագրությունը համալսարանի աջակցությամբ ֆինանսավորում է գտել Գավառի քաղաքապետարանի կողմից:

Համալսարանում ցանկություն կա նաև ավելացնելու գիտահետազոտական զարգացման բյուջեն, սակայն դեռևս կոնկրետ քայլեր այդ ուղղությամբ չեն իրականացվում: Վերջին շրջանում ավելացվել է դասախոսների աշխատավարձները հավասարաչափ:

[6] Միտքը վերաձևակերպվել է բուհի դիտարկումների հիման վրա:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Համալսարանում փաստացի ֆինանսական ռեսուրսների բաշխումը իրականացվում է եկամուտների և ծախսերի նախահաշվով: Ֆինանսական կառավարումը իրականացվում է ռեկտորի և գլխավոր հաշվապահի կողմից: Այցի ընթացքում բարձրացված խնդիրներից պարզ է դառնում, որ միջին օղակի ղեկավարները դրական են գնահատում բյուջեի օգտագործման ուղղությունները: Ֆինանսական միջոցների պլանավորման ժամանակ հաշվի են առնվում ֆակուլտետների կարիքները, որոնք ապահովում են կրթության շարունակական բարելավումը:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Նախորդ հավատարմագրման ընթացքում արձանագրվել էր, որ լաբորատորիայում առկա չեն համապատասխան գործիքներ և նյութեր՝ այն արդյունավետ օգտագործելու համար: Ներկայիս փորձագիտական այցելության ընթացքում պարզ դարձավ, որ վերջին տարիներին վերանորոգվել և կահավորվել են համալսարանի մի շարք լսարաններ, լաբորատորիաները համալրվել են նոր տեխնիկայով և անհրաժեշտ նյութերով, ինչը ավելի արդյունավետ է դարձրել ուսանողների ուսումնական գործընթացի կազմակերպումը: Բանասիրական ֆակուլտետում վերանորոգվել են լսարաններ, առկա է հանդիպումների և քննարկումների սենյակ, նորաբաց քաղաքացիական պաշտպանության սենյակ:

Համալսարանի ֆինանսական ռեսուրսների զգալի մասը ուղղվում է աշխատավարձային ֆոնդին, այլ աղբյուրներից բյուջեի համալրման հնարավորությունները սահմանափակ են:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Գավառի պետական համալսարանում տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացների կառավարումը իրականացվում է ԳՊՀ գործավարության կարգով, որով սահմանվում է համալասարան մուտք եղած և ելքագրված բոլոր փաստաթղթերի հաշվառումը և շրջանառությունը:

Տեղեկատվությունը ՄՈՒՀ-ը ստանում է ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային միջոցով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ թղթային նամակները ուղղվում են ռեկտորատ, իսկ էլեկտրոնային նամակներով զբաղվում է արտաքին կապերի և լրատվության բաժինը, սակայն նամակներ ստանալուն պես դրանք նույնպես ուղղում են ռեկտորատ:

ԳՊՀ-ում օգտագործվել են էլեկտրոնային ուսուցման և կառավարման հետևյալ ներքին համակարգերը՝ Learn.gsu.am, Distance.gsu.am, Dekanat.gsu.am, Anhatakan.gsu.am և Diplom.gsu.am:

Կայքէջում առանձնացված է «Նախագծեր» բաժինը, որտեղ տեղադրվում են Համալսարանում մշակվող կարգերի, ընթացակարգերի, ներբուհական այլ

ակտերի նախագծերը, որպեսզի ներքին և արտաքին շահակիցները հնարավորություն ունենան իրենց կարծիքներն ու դիտարկումները հայտնել փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ:

Համալսարանում գործում է արխիվ, որտեղ պահպանվում են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը սկսած համալսարանի բացման օրվանից, պահպանված են նվազագույն անվտանգության պահանջները, իսկ 2021 թ. գնված է տեխնիկա, որի միջոցով պլանավորվում է թվայնացնել արխիվը:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Համալսարանում առկա են առողջապահական տեսանկյունից անհրաժեշտ նվազագույն պայմանները: Բուժկետում աշխատում է որակավորում ունեցող աշխատակից:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քովիդի համավարակով պայմանավորված նվազագույն պահանջները ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ում մուտքի մոտ, միջանցքներում առկա է ալկոգել և դիմակներ, լսարանները ախտահանվում են շուրջօրյա՝ օրական երկու անգամ, համալսարանի մասնաշենքերի մուտքի մոտ իրականացվում է ջերմաչափում, իսկ աշխատակազմը ունի պատվաստումների սերտիֆիկատներ կամ քովիդի թեսթի՝ սահմանված պարբերականությամբ պատասխաններ:

Համալսարանում հետևում են լաբորատոր սարքավորումների և նյութերի անվտանգ պահմանմանն ու օգագործմանը, առկա են տեսախցիկներ, անվտանգության աշխատակիցներ, որոնք ապահովում են ուսանողների և դասախոսների անվտանգ միջավայրը: Համալսարանի մուտքերը հարմարեցվել են հատուկ կարիք ունեցող անձանց համար և համալսարանի մուտքի մոտ առկա են թեքահարթակներ, սակայն ՄՈՒՀ-ի շենքերը հնարավորություն չեն տալիս ունենալ հատուկ կարիք ունեցող անձանց համար մուտք վերևի հարկեր:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ԳՊՀ ռեսուրսների կիրառելիության, հասանելիության վերաբերյալ կարծիքների մասին տեղեկատվությունը հավաքագրվում է հարցումների միջոցով. հարցումների արդյունքները մեծապես ունեն դրական արդյունքներ:

Յուրաքանչյուր ամբիոն տարվա սկզբին ներկայացնում է ռեսուրսների կիրառելիության վերաբերյալ պահանջները, կատարվում են քննարկումներ, և ՄՈՒՀ-ի պատասխանատու անձինք հնարավոր կարճ ժամանակահատվածում աշխատում են հնարավորությունների շրջանակներում բարելավել պահանջները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ԳՊՀ-ն կարևորում է իր շենքային պայմանների և ռեսուրսային ապահովվածության առկայությունն ու զարգացումը: Հատկապես ողջունելի է, որ ուսանողները հիմնականում

գոհ են առկա ռեսուրսներից և ուսումնական միջավայրից, թեև ունենում են հնարավորություն բարձրաձայնելու իրենց կարիքները:

ԳՊՀ-ի բյուջեի մեծ մասը աշխատավարձներն են, իսկ վերջին տարվա ընթացքում աշխատակիցների աշխատավարձերը ավելացվել են համաչափ սկզբունքով: Հետևաբար՝ հատկապես կարևոր է դառնում ֆինանսական միջոցների՝ այս ուղղությամբ ծախսերի արդյունավետության ապահովման մեխանիզմ ունենալը: Մասնավորապես՝ աշխատակիցների տարբերակված խրախուսում իրականացնելըթույլ կտա ապահովել ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում և աշխատողների ավելի թիրախային խրախուսումներ, ինչը կնպաստի ինչպես ընդհանուր աշխատակիցների արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ հնարավորություն կընձեռի լրացուցիչ միջոցներ խնայել ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման, գիտահետազոտական և այլ ուղղություններով ներդրումներ իրականացնելու համար:

Այլ աղբյուրներից բյուջեի համալրման հնարավորությունները սահմանափակ են, ինչը թույլ չի տալիս տարածաշրջանի համար կարևոր մասնագիտությունների գծով ծրագրերի իրականացման համար սահմանել լրացուցիչ միջոցներ:

Նախորդ հավատարմագրման ընթացքում արձանագրվել էր, որ գրադարանային ֆոնդի շուրջ 1%-ն է թվայնացված: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ գրադարանի գրքերի ֆոնդի մոտ 10%-ն է թվայնացվել, ինչը, միևնույնն է բավական ցածր ցուցանիշ է: Գրադարանի պատասխանատուի հետ հանդիպման ժամանակ գրադարանի համալրման հարցի հետ կապված պարզ դարձավ, որ ամբիոնները ներկայացնում են պահանջված գրականությունը և ՄՈՒՀ-ը ըստ պահանջի ձեռք է բերում դրանք: Սակայն, գրադարանային ֆոնդը ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ գրականությունը հին է և, չհաշված մի քանի օտարերկրա լեզվով գրքերի, որոնք ձեռք էին բերվել գրանտային միջոցներով, մնացածը հիմնականում ժամանակակից հետազոտություն իրականացնելու համար անարդյունավետ են: Ուսանողները նույնպես բարձրացրեցին նոր գրականություն ունենալու մասին ցանկություն և հաստատեցին դրա կարևորությունը:

Որպես դրական կողմ կարելի է նշել համալսարանում օնլայն տարատեսակ հարթակների առկայությունը, սակայն որոշ դասապրոցեսներ այլ հարթակներով իրականացնելը, ինչպես նաև տարբեր հարթակներում ներկայություն ունենալը կարող է լրացուցիչ ծանրաբեռնվածություն առաջացնել ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների շրջանում:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև այն, որ ԳՊՀ-ում ստեղծված է անվտանգ միջավայր, որը նպաստում է արդյունավետ ուսումնառությանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գավառի պետական համալսարանում առկա են բավարար լսարանային ֆոնդ՝ հագեցած անհրաժեշտ տեխնիկայով, գրադարանային ֆոնդով հագեցած կրթական միջավայր, կրթության կայունության ապահովմանն ուղղված ֆինանսական բաշխվածություն, ինչպես նաև ուսանողների և դասախոսների համար կրթության կազմակերպման համար ապահով և անվտանգ միջավայր, փորձագիտական խումբը գտնում է, որ Գավառի պետական համալսարանը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Նախորդ հավատարմագրման ընթացքում արձանագրվել էր, որ ԳՊՀ-ում առանձին փաստաթղթի ձևով բացակայում է հաշվետվողականության սահմանված կարգը: Ներկայիս այցելության արդյունքում փորձագիտական խումբը պարզեց, որ այս ուղղությամբ կատարվել են բարելավման աշխատանքներ և համալսարանում հաշվետվողականությունը կանոնակարգված է ներքին ընթացակարգով՝ հետադարձ կապի ապահովման հաշվետվողականության կարգով, որը ենթադրում է հաշվետվությունների ներկայացում գրեթե բոլոր մակարդակներում: Փորձագիտական այցի ընթացքում տարբեր մակարդակի ղեկավարների հետ քննարկումներից պարզ դարձավ, որ համալսարանում համատեղ քննարկումները կրում են հաճախակի բնույթ և առկա է նաև ոչ ֆորմալ ուղղահայաց և հորիզոնական հաշվետվողականություն: ՄՈՒՀ-ում առկա է հոգաբարձուների խորհուրդ, որտեղ քննարկվում են տարատեսակ ընդհանուր բնույթի հարցեր, մշակվում է ռազմավարությունը, կատարվում են նաև ձեռքբերումների մասին զեկույցներ:

ՄՈՒՀ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունները ստուգվում են անկախ աուդիտորական ընկերության կողմից, որոնք հրապարակվում են համալսարանի ինտերնետային կայքում: Ռեկտորի տարեկան հաշվետվությունները նույնպես հասանելի են ինտերնետային կայքում:

Համալսարանում առկա չեն հաշվետվողականության գնահատման ցուցանիշներ և մեխանիզմներ: Չնայած այն հանգամանքին, որ համալսարանը գործում է թափանցիկության սկզբունքով, սակայն տրամադրված տեղեկատվությունը հիմնականում կրում է ինֆորմատիվ բնույթ, ներկայացվում են դրական իրադարձությունները և ձեռքբերումները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանում դասախոսների, միջին օղակի ղեկավարների և բարձր օղակի ղեկավարների միջև ֆորմալ և ոչ ֆորմալ բնույթի հանդիպումները կրում են հաճախակի բնույթ, ինչը ապահովում է տեղեկատվության արագ փոխանցումը ՄՈՒՀ-ի տարբեր մակարդակների պատասխանատուների միջև:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

Համալսարանում իրականացվող բարեփոխումների մասին տեղեկատվությունը հիմնականում արտացոլվում է ինտերնետային կայքի նորություններ բաժնի, ինչպես նաև ֆեյսբուքյան էջի միջոցով: Համալսարանի ինտերնետային կայքը բավարար տեղեկատվություն է ապահովում ՄՈՒՀ-ի մասին ընդհանուր տեղեկատվության առումով, մասնավորապես առկա են հիմնադիր փաստաթղթերը, բաժինները, գիտություն բաժինը, որակի ապահովման մասին տեղեկատվություն, նորությունները, որոնցից օգտվում են ինչպես ուսանողները, այնպես էլ դասախոսները և այլ շահակիցներ: Կայքի անգլերեն տարբերակում, սակայն, ոչ բոլոր տեղեկություններն են հասանելի:

ՄՈՒՀ-ի մասին նորությունների հասանելիությունը բարձրացնելու համար օգտագործվում են նաև Գավառի համալսարանական թերթը, տեղական հեռուստատեսությունը, մամուլը:

Համալսարանում առկա է արտաքին կապերի և լրատվության բաժին, որտեղ զբաղվում են հասարակության հետ կապերի ապահովմամբ և տեղեկատվության ներկայացմամբ: Բաժնի կողմից իրականացվում են տարաբնույթ միջոցառումներ, մամլո ասուլիսներ, քննարկումներ դպրոցներում և այլ հաստատություններում և ներկայացվում են ՄՈՒՀ-ի տարբեր միջոցառումների, ձեռքբերումների, առկա հնարավորությունների մասին:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հետադարձ կապի գործառույթը հիմնականում իրականացնում է արտաքին կապերի և լրատվության բաժինը: Հետադարձ կապի միջոցներ են հանդիսանում ֆեյսբուքյան էջը, էլեկտրոնային փոստը, և թղթային փոստը: Ֆեյսբուքյան էջը ունի 5500 հետևորդ, ինչը խոսում է ակտիվ էջ ունենալու մասին: Հիմնական հրապարակումները վերաբերում են աշխատանքային հանդիպումներին, գիտաժողովներին, խորհրդի նիստերին: Սակավաթիվ մեկնաբանությունները թույլ չեն տալիս միանշանակ գնահատելու ֆեյսբուքյան էջի, որպես հետադարձ կապի միջոցի արդյունավետությունը:

Այցելության ընթացքում տեղի ունեցող քննարկումների ժամանակ պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի և գործատուների միջև քննարկումներ են տեղի ունեցել, որոնց արդյունքում առաջարկություններ են արվել մասնագիտական ծրագրերի վերաբերյալ, ներդրվել է տեղեկատվական իրավունք առարկան, ավելացվել է անգլերենի ժամաքանակը:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Համալսարանի կողմից պարբերական բնույթ կրող դասախոսությունների, սեմինարների, գիտաժողովների կազմակերպումը հասարակությանը գիտելիքի փոխանցման որոշակի մեխանիզմ է: ԳՊՀ-ում տարատեսակ միջոցառումներ են իրականացվում ինչպես համալսարանի փորձի փոխանցման, այնպես էլ տարածաշրջանի հիմնախնդիրները բացահայտող քննարկումներ իրականացնելու համար: Մի շարք կարևոր վերապատրաստումներ են իրականացվել ՄՈՒՀ-ում, որոնցից է, օրինակ, գնումների գործընթացի վերաբերյալ վերապատրաստումը տարածաշրջանի

ընկերությունների տնօրենների համար: ՄՈՒՀ-ում գործող լաբորատորիան օգտագործվում է դպրոցների աշակերտների համար փորձեր իրականացնելու համար:

ԳՊՀ-ում հասարակության հետ կապերի ձևավորման համար իրականացվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես մամլո ասուլիսներ, քննարկումներ համալսարանում և համալսարանից դուրս, օրինակ հանդիպումներ դպրոցներում, քոլեջներում և այլ հաստատություններում, տարատեսակ իրազեկման միջոցառումներ հեռուստատեսությամբ և այլ լրատվական հարթակներով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհում գործող ներքին հաշվետվողականության մեխանզմների առկայությունը, որը նպաստում է արտաքին հաշվետվողականությանը: Առկա է ժամանակակից ինտերնետային կայք, որտեղ հրապարակվում են ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվություններ, այդ թվում՝ ռեկտորի տարեկան հաշվետվությունները: Ֆեյսբուքյան էջի միջոցով համալսարանը կիսվում է տարբեր միջոցառումների մանրամասներով և ձեռքբերումներով, ինչի շնորհիվ համալսարանում տեղի ունեցող գործընթացների մի մասը հանրության համար դառնում է թափանցիկ:

ՄՈՒՀ-ի ինտերնետային կայքում համալսարանի շահակիցները կարող են գտնել իրենց համար անհրաժեշտ տեղեկատվություն, սակայն այն միայն մասամբ է հասանելի կայքի անգլերեն լեզվով տարբերակում, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ միջազգային գործընկերների ներգրավման հարցում: Համալսարանի ինտերնետային կայքում առկա են թափանցիկությանն ուղղված մի շարք փաստաթղթեր, մասնավորապես համալսարանի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի որոշումները, սակայն պետք է նշել, որ որոշ դեպքերում թարմացումներ չեն իրականացվում, իսկ որոշ դեպքերում տեղեկատվությունը մասամբ բացակայում է, ինչը, անկախ պատճառներից, կարող է վնասել համալսարանի նկատմամբ վստահությանը:

Չնայած այն հանգամանքին, որ համալսարանը իրականացնում է հասարակության հետ կապերի ձևավորման ուղղությամբ մի շարք միջոցառումներ, այնուհանդերձ դրանց մի մասը ուղղված է ուսանողների թվի մեծացմանը, այլ ոչ թե համալսարանի ձեռքբերումների և հնարավորությունների, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ Գավառի պետական համալսարանի հաշվետվողականության համակարգը հնարավորություն է տալիս վերհանել տարատեսակ խնդիրներ և տեղեկատվություն, որը կարող է դրականորեն ազդել համալսարանի կայուն զարգացման վրա, համալսարանը մի շարք հարցումներ է իրականացնում տարբեր շահառուների հետ, ինչը ապահովում է հետադարձ կապը ՄՈՒՀ-ի հետ, կայքի և այլ միջոցներով ձգտում է ապահովել իր գործունեության թափանցիկությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Արտաքին կապերը և համագործակցությունը ԳՊՀ ռազմավարական ծրագրի գերակա ուղղություններից է: Նախորդ փորձագիտական զեկույցի հիման վրա բուհի հանրության հետ կապերի և լրատվության բաժինը վերակազմակերպվել է արտաքին կապերի և լրատվության բաժնի, հստակեցվել են դրա գործառույթները: Բացի այդ, հաստատվել է «Գավառի պետական համալսարանի միջազգայնացման ռազմավարական ծրագիրը»: Վերջինս սահմանում է միջազգայնացման ուղղությունները, նպատակներն ու խնդիրները, միջոցները և պատասխանատու օղակների ընդհանուր ցանկը, սակայն, հստակ սահմանված չեն ժամկետները, ինչպես նաև նպատակների չափելիությունը: Ավելին, դրանում կամ կից մեկ այլ փաստաթղթում սահմանված չեն այդ նպատակների իրականացման համար կոնկրետ քայլերն ու մեխանիզմները կամ տարեկան գործողությունների պլաններ և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ֆակուլտետների և ամբիոնների մակարդակով խրախուսվում է արտաքին կապերի ակտիվացումը և միջազգայնացմանն ուղղված ծրագրերի իրականացումը: Բուհի միջազգայնացման գործընթացները լուսաբանվում են ԳՊՀ պաշտոնական կայք էջում, ԳՊՀ ֆեյսբուքյան, Յութուբյան և սոցիալական այլ հարթակներում: Կազմակերպվում են տեղեկատվական և բաց դռների օրեր, որոնց ընթացքում ներկայացվում են ԳՊՀ իրականացրած միջազգային ծրագրերը, ակադեմիական շարժունության ծրագրերը և դրանց մասնակցելու ընթացակարգերը: Այնուամենայնիվ, արտաքին կապերի հաստատումը խրախուսող հստակ ընթացակարգեր բուհում դեռևս ներդրված չեն: Նկարագրված չէ արտաքին կապերի և լրատվության բաժնի նպատակների կամ թիրախների՝ ըստ տարիների սահմանման գործընթացը, համագործակցության համար բուհեր ընտրելու մոտեցումները: Որպես թույլ կողմ, այս չափանիշի մասով բուհը նշել է միջազգայնացման նպատակներով ֆինանսների հայթայթման գծով աշխատակիցների և համապատասխան փորձի պակաս, ինչպես նաև՝ միջազգային ծրագրերի և դրամաշնորհների կառավարման առանձին ստորաբաժանման բացակայություն:

Բուհը նպատակ է դրել նաև դառնալ գրավիչ միջավայր օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններից ուսանողներ և դասավանդողներ ներգրավելու համար: Այս նպատակի իրագործման համար ևս կոնկրետ քայլերը կամ գործողությունների ծրագիրը կամ ռեալ իրագործման հնարավորությունն ու մարտահրավերները նկարագրված չեն, ուստի, այս նպատակն առավելապես հռչակագրային բնույթի է: Ուսանողների/դասախոսների ներհոսքի խիստ սակավ թվերը ևս վկայում են այդ մասին:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ԳՊՀ միջազգայնացմանն ուղղված գործառույթներն իրականացնում է բուհի արտաքին կապերի և լրատվության բաժինը, որի գործունեության ուղղություններն ու աշխատակիցների պարտականությունները սահմանված են բաժնի կանոնակարգով:

Արտաքին կապերի և լրատվության բաժնի խնդիրներից են ԳՊՀ միջազգայնացման նպատակով օտարերկրյա բուհերի, գիտակրթական կենտրոնների, պետական մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության խթանումը, ԳՊՀ միջազգայնացմանն ուղղված կանոնադրական նպատակներից բխող միջազգային աշխատաժողովներին, գիտաժողովներին, վերապատրաստումներին և այլ ծրագրային միջոցառումներին մասնակցելու նպատակով արտերկիր մեկնող պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամների, հետազոտողների, ուսանողների գործուղումներին առնչվող փաստաթղթային աշխատանքների կազմակերպումը, դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունության միջազգային ծրագրերի համակարգումը, ծրագրերի մասին երկլեզու տեղեկատվության տարածումը, շարժունության ընթացքի, իսկ դրա ավարտից հետո նաև հաշվետու հանդիպումների կազմակերպումը:

Փորձագիտական խմբին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցի ընթացքում պարզ դարձավ, որ արտաքին կապերի և միջազգայնացման փաստաթղթավորված ընթացակարգեր սահմանված չեն: Օրինակ՝ բացակայում է փոխանակման ծրագրերի մասնակիցների ընտրության ընթացակարգ, կազմակերպությունների հետ գործընկերության հաստատման ընթացակարգ և այլն:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Համալսարանն անդամակցում է ակադեմիական շարժունության և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակներ ունեցող 21 միջազգային ծրագրի՝ համագործակցելով շուրջ 60 գործընկեր համալսարանների հետ, աշխարհի տարբեր մասերից: Ակադեմիական փոխանակման ծրագրերին և միջազգային այլ ծրագրերին ու նախաձեռնություններին մասնակցել է ԳՊՀ 117 ուսանող և պրոֆեսորադասախոսական կազմի 211 ներկայացուցիչ: ԵՄ Էրազմուս+ «ՍՄԱՐԹ» ծրագրի շրջանակում ստեղծվել է «ԳՊՀ ՍՄԱՐԹ» կենտրոնը, որը հանդիսանում է կապող օղակ սեփական բիզնես գաղափարները կյանքի կոչել ցանկացող ուսանողների, մարզի ձեռնարկատերերի և դասախոսների միջև՝ տրամադրելով համապատասխան տարածք և ուսումնաօժանդակ ռեսուրսներ:

ԳՊՀ-ն առաջինն է ՀՀ բուհական համակարգում, որն ընդգրկվել է «Յունուս» համալսարանական ցանցում, որի շրջանակում անցկացվում են առցանց դասախոսություններ հայտնի փորձագետների կողմից, որոնք ուսանողներին են փոխանցում գիտելիքներ սոցիալական ձեռնարկատիրության և այլ հեռանկարային ոլորտների վերաբերյալ, ներկայացնում իրենց հաջողության պաճտմությունները, զարգացնում նրանց ձեռներեցության հմտությունները: Բուհն ունի նաև առանձին

պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության հուշագրեր։

Կապերի հաստատումն առավելապես բխում է անձնական կապերի շրջանակից։ Թույլ է գիտահետազոտական գործունեության ուղղությամբ համագործակցային շրջանակը, գործատուների հետ համագործակցությունն ուղղված է առավելապես պրակտիկաների կազմակերպմանը։ Գործընթացի արդյունավետության գնահատման հստակ մոտեցումները բացակայում են։

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար։

Ներքին շահակիցների օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով ԳՊՀ-ն կազմակերպում է օտար լեզվի բազմամակարդակ դասընթացներ ինչպես վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի, այնպես էլ ուսանողների համար։ Օտար լեզվի ուսուցումը ԳՊՀ-ում՝ համաձայն բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների, իրականացվում է առնվազն 3 կիսամյակի ընթացքում՝ ընդ որում բոլոր բաժինների մագիստրատուրայի կրթական ծրագրերում դասավանդվում է «Մասնագիտական օտար լեզու» դասընթացը։

Բուհի աշխատակիցների համար նախատեսված է անգլերենի դասընթաց՝ տարեկան 34 դաս (մեկ կիսամյակի ընթացքում)։

Ինչպես նշվեց, բուհի նպատակներից է դառնալ գրավիչ միջավայր օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններից ուսանողներ և դասավանդողներ ներգրավելու համար, մինչդեռ դեռևս շատ քիչ թվով դասախոսներ են պատրաստ դասավանդել անգլերենով, ուստի օտար լեզուներով լրացուցիչ վերապատխաստումները կարող են շահավետ լինել։

Դատողություններ: Ողջունելի է, որ նախորդ գնահատման զեկույցի առաջարկությունների հաշվառմամբ ԳՊՀ-ում հստակեցվել են միջազգայնացմամբ և արտաքին կապերով զբաղվող բաժնի գործառույթներն ու կանոնակարգը, ինչպես նաև ԳՊՀ ռազմավարական զարգացումը պլանավորվել է՝ բուհի միջազգայնացման նպատակների հաշվառմամբ։ Գովելի է բուհի ակտիվ մասնակցությունը տարբեր միջազգային և դրամաշնորհային ծրագրերին, ինչը նպաստում է փորձի փոխանակմանը։

Այնուամենայնիվ, ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը և փորձագիտական այցի ընթացքում ունեցած հանդիպումները վկայում են, որ համապատասխան ընթացակարգերը հստակ չեն, և առկա էդրանք առավել մանրամասն նկարագրելու և թափանցիկ դարձնելու անհրաժեշտություն, ինչպեսև՝ արտաքին կապերի հստակ նպատակադրման կամ թիրախավորման և արդյունքի գնահատման մեխանիզմի անհրաժեշտություն, որի պակասը կարող է վտանգել արտաքին կապերի և համագործակցության կայունությունը։

Թեև միջազգայնացումը ու արտաքին կապերի զարգացումը բուհը համարում է իր ուժեղ կողմերից մեկը, որով ձեռքբերումները դինամիկ աճ են արձանագրել, այնուամենայնիվ, համագործակցության շրջանակները լիարժեք չեն ապահովում ռազմավարական հավակնոտ նպատակները կրթական, հետազոտական,

միջազգայնացման, շարժունության գործընթացների տեսանկյունից: Արտաքին կապերի և միջազգայնացման հաստատումը կարող է ավելի կայուն լինել, եթե առավելապես հիմնված լինի ոչ թե անձնական կապերի, այլ ինստիտուցիոնալ քաղաքականության վրա: Բացի այդ, թույլ է գիտահետազոտական գործունեության ուղղությամբ համագործակցային շրջանակը, իսկ գործատուների հետ համագործակցությունն ուղղված է առավելապես պրակտիկաների կազմակերպմանը, ինչը թույլ չի տալիս լիարժեք օգուտներ քաղել հաստատված կապերից:

Եզրահանգում: Հաշվի առնելով միջազգայնացման գործընթացի կարևորումը ԳՊՀ-ում, միջազգային ծրագրերին ակտիվ մասնակցությունը, ինչպես նաև ուսանողների, դասախոսների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակի բարելավմանն ուղղված որոշ միջոցառումների ձեռնարկումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԳՊՀ-ն բավարարում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԳՊՀ որակի ներքին ապահովման համակարգի շրջանակը, սկզբունքները, մոտեցումները, կառուցվածքը և գործիքակազմը սահմանված են ՈԱ ձեռնարկում: Վերջինս ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի մեթոդաբանական հիմքն է: Ձեռնարկում հստակ սահմանված է, թե ինչպես է համալսարանն ընկալում որակի ապահովումը և կապը ՈԱ մեխանիզմի ու ռազմավարական ծրագրում արտացոլված նպատակների միջև:

Որակի ներքին ապահովման համակարգի հիմքը, համաձայն ՈԱ ձեռնարկի, Որակի ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշներն են:

Սահմանված են բարելավման ընթացակարգեր առանձին խոշոր ուղղությունների համար (ՄԿԾ-ներ, ռեսուրսներ, ՊԴԿ և այլն): Այդ փաստաթղթերը, սակայն, բնույթով ընթացակարգային չեն, հստակ գործողություններ և դրանց իրականացման պարբերականություն հիմնականում չեն սահմանվում:

Հարցումները դիտվում են որպես որակի ապահովման հիմնական գործիք: Հարցումների մեթոդաբանությունը, սակայն, հստակ սահմանված չէ: ԳՊՀ տարբեր օղակների հաշվետվությունները ևս ՈԱ հիմնական գործիքներից են: Դրանց միջոցով վերհանված խնդիրների դեպքում ՈԱ բաժինը որպես կանոն մասնակցում է խնդրի լուծմանը, օրինակ՝ որևէ փաստաթղթի մշակմանը կամ վերամշակմանը:

Ինչպես պարզվեց այցի ընթացքում, ՈԱ բաժինը համարում է, որ ԳՊՀ-ում բարելավումների առաջնահերթությունները պետք է լինեն կրթության ներառականությունը, շահակիցների ներգրավումը, նյութական ռեսուրսների բարելավումը, նոր ՄԿԾ ներդրումը: Նշված առաջնահերթությունները միայն մասամբ են հիմնված հարցումներից ստացված տվյալների վրա:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Որակի ներքին ապահովման համակարգի կենտրոնական օղակը ՈԱ բաժինն է, որի գործառույթները սահմանված են բաժնի գործունեության կանոնակարգով:

Որպես կառուցվածքային ստորաբաժանում՝ ՈԱ բաժինը վերահսկվում է ռեկտորի կողմից: Այդուհանդերձ, ինչպես պարզվեց այցի ընթացքում, ՈԱ բաժինն իր արդյունքները հասցեագրում է ոչ թե հենց ռեկտորին, այլ ներքին և արտաքին շահակիցներին:

Ներկայումս բաժինն ունի 3 աշխատակից: Նրանց գործառույթներն ամրագրված են համապատասխան պաշտոնների անձնագրերում, աշխատանքի նկարագրերում: ՈԱ բաժնի աշխատակիցներն անցել են որոշ վերապատրաստումներ, սակայն դրանք չեն փոխկապակցվել ԳՊՀ-ում ՈԱ գործընթացների հետ:

Այցի ընթացքում ստացված տեղեկությունների համաձայն՝ ՈԱ բաժինը ռեսուրսների կարիք չի տեսնում: Համալսարանը տրամադրում է գործընթացների իրականացման համար անհրաժեշտ նյութական և ֆինանսական միջոցներ: Այնուամենայնիվ, ՈԱ գործընթացների համար տրամադրվող ռեսուրսների արդյունավետությունը չի գնահատվում:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

ԳՊՀ ՈԱ համակարգում ներգրավված մարմինները և դրանց գործառույթները սահմանված են ՈԱ ձեռնարկում: Ձեռնարկում նաև նկարագրված են ներքին և արտաքին շահակիցներին համալսարանի ՈԱ գործընթացներում ներգրավման մեխանիզմները:

Հետադարձ կապի հավաքագրման հիմնական մեխանիզմը հարցումների անցկացումն է, որոնց մասնակցում են շահակիցների գրեթե բոլոր խմբերը: Այցի ընթացքում պարզվեց, որ ՈԱ գործընթացներում ներգրավվածության առումով համեմատաբար պասիվ են գործատուները:

Հարցումներից բացի՝ ՈԱ գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավման նկարագրված միջոցները սակավաթիվ են:

ՈԱ գործընթացներին մասնակցելու համար արտաքին շահակիցների ընտրության և ներգրավման գործընթացներում գործադրվում են նաև ոչ ֆորմալ՝ միջանձնային կապերի վրա հիմնված մոտեցումներ:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Որակի ներքին ապահովման համակարգի նպատակները հստակ ձևակերպված չեն, ինչի արդյունքում չկան համակարգի արդյունավետության գնահատման հիմքեր: Այդուհանդերձ, մշակված է ՈԱԲ գործունեության գնահատման հարցաթերթ:

Իրականացվել է ՈՆԱ համակարգերի համեմատական վերլուծություն 3 բուհերի հետ, ինչպես նաև Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների պահանջների հետ: Արդյունքում մշակվել են որոշ մեխանիզմներ և փոփոխություններ ուղեցույցում:

10.5 Որակի ապահովման ներքին հաակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

2021 թ. ինքնավերլուծության գործընթացը մեծապես հիմնվել է որակի ներքին ապահովման համակարգի արդյունքների վրա, սակայն իրականացվել են նաև հավելյան հարցումներ: Բացի այդ՝ ԳՊՀ-ում իրականացվել է միջանկյալ ինքնավերլուծություն 2017-2019 թթ. համար:

Այդուհանդերձ, ՈԱ գործիքակազմի (այդ թվում՝ տվյալների հավաքագրման գործիքների) արդյունավետությունը չի վերլուծվում:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Ըստ ՈԱ ձեռնարկի՝ թափանցիկությունն ու հրապարակայնությունը ՈԱ սկզբունքներից են: Որակի ներքին ապահովման համակարգի գրեթե բոլոր արդյունքները հրապարակվում են և հասանելի դառնում ներքին և արտաքին շահակիցներին կայքի և այլ միջոցներով: Սակայն այդ արդյունքները հիմնականում չեն պարունակում գործընթացների որակի մասին հավաստի տեղեկատվություն և վերլուծություններ: Հավաքագրված տվյալների վիճակագրական վերլուծություններ գրեթե չեն արվում, իսկ հավաստիությունն ապահովվում է քանակով և աղբյուրների բազմազանությամբ: Արդյունքում որակի ներքին ապահովման համակարգի կողմից տրամադրվող տեղեկությունները որպես կանոն քննադատական բնույթի չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ փաստաթղթերի մակարդակով ԳՊՀ-ն ունի իր գործունեության մասին վկայող համապատասխան հիմքեր. ՈԱ քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք համալսարանի ներսում կարող են նպաստել որակի մշակույթի ձևավորմանը: Փորձագիտական խումբը կարևորում է ԳՊՀ ՈԱ համակարգի շրջանակի, սկզբունքների և կառուցվածքի սահմանված լինելը ՈԱ ձեռնարկում, ինչպես նաև որակի ներքին ապահովման համակարգը Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին համապատասխանեցնելու ձգտումը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարծում է, որ ՈԱ ընթացակարգերի իրականացումը կարող է վտանգվել հստակ գործողություններ և դրանց իրականացման պարբերականություն ամրագրված չլինելու պարագայում:

Ողջունելի է բազմաթիվ հարցումներին շահակիցների գրեթե բոլոր խմբերին մասնակից դարձնելու ԳՊՀ մոտեցումը, սակայն միևնույն ժամանակ հարցումների մեթոդաբանությունը հիմնավորված չլինելու պարագայում չի կարող լինել վստահություն հարցումների արդյունքների վերաբերյալ:

ՈԱ համակարգի դիտարկումներին ԳՊՀ հաշվետվությունների ինտեգրումը դրական է, քանի որ թույլ է տալիս կենտրոնանալ փաստացի իրականացված գործընթացների վրա: Սակայն խնդրահարույց է տրվող լուծումներին ՈԱ բաժնի ակտիվ մասնակցությունը, քանի որ հետագայում ՈԱ բաժինը գնահատելու է իր իսկ մշակած ընթացակարգերի որակը:

Համալսարանը դեռևս չի ներդրել որակի առաջընթացի չափելի ցուցիչներ: Որակի ներքին ապահովման համակարգի հավաքագրված տեղեկությունների ոչ լիարժեք վստահելիության պայմաններում ՈԱ բաժինը նաև ինտուիտիվ մոտեցում է դրսևորում, ինչն արտահայտվում է, օրինակ՝ ԳՊՀ-ում բարելավումների առաջնահերթությունները որոշելիս:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՈԱ բաժնի գործառույթները սահմանված են բաժնի գործունեության կանոնակարգով, իսկ աշխատակիցների գործառույթներն ամրագրված են համապատասխան պաշտոնների անձնագրերում, աշխատանքի նկարագրերում: ՈԱ բաժնի նշանակությունը ԳՊՀ-ում բարձր է, և բաժինը հաղորդակցվում է գրեթե բոլոր օղակների հետ: ՈԱ բաժնի հաշվետվությունները մշակվում են ոչ թե ԳՊՀ ղեկավարությանը հասցեագրվելու, այլ հրապարակվելու հեռանկարով: Արդյունքում առաջանում է որոշակի խզում ՊԻԳԲ շրջափուլի փուլերի միջև:

ՈԱ բաժինը համալրված է և ստանում է ռեսուրսներ. փորձագիտական խումբը կարծում է, որ սա որոշակի երաշխիք է ՈԱ բաժնի գործունեության կայունության և կարողությունների հնարավոր զարգացման: Ներդրված ռեսուրսների արդյունավետությունը, սակայն, չի գնահատվում: Նույնը վերաբերում է վերապատրաստումներին: Արդյունքում վտանգվում է վերապատրաստումների և այլ ներդրումների թիրախայնությունը և հետագա զարգացումը:

Փորձագիտական խումբը ողջունելի է համարում ներքին և արտաքին շահակիցներին ՈԱ գործընթացներում ներգրավելու ԳՊՀ մոտեցումը, որն ամրագրված է ՈԱ ձեռնարկում: Ընտրված հիմնական գործիքը՝ հարցումների անցկացումը, սակայն, հիմնավորման և արդյունավետության գնահատման կարիք ունի: Փորձագիտական խումբը կարծում է, որ շահակիցների յուրաքանչյուր խումբ կարող է իր առանձնահատկություններն ունենալ, և միևնույն գործիքը բոլոր դեպքերում միևնույն արդդունավետությամբ կարող է չաշխատել: Արդյունքում որոշ խմբեր, հատկապես՝ արտաքին շահակիցների, միայն պասիվ մասնակցություն ունեն: Օրինակ՝ գործատուների և շրջանավարտների ուղղակի ներգրավվածության պակասը չի նպաստում աշխատաշուկայի կարիքների բացահայտմանը, պետական մարմինների և հնարավոր հովանավորների ներգրավվածության պակասը ևս կաշկանդում է մուտքի զարգացումը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ ՈԱ համակարգի արդյունավետությունը գրեթե չի գնահատվում: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարծում է, որ արդյունավետության գնահատումը տեղին չի լինի, քանի դեռ հստակ սահմանված չեն որակի ներքին ապահովման համակարգի նպատակները: Միևնույն ժամանակ ողջունելի է, որ իրականացվել է ՈՆԱ համակարգերի համեմատական վերլուծություն:

Փորձագիտական խումբը կարծում է, որ ՈԱ գործիքակազմի (այդ թվում՝ տվյալների հավաքագրման գործիքների) արդյունավետությունը մուհում չվերլուծելը թույլ չի տալիս արտաքին գնահատողին ՈՆԱ տվյալները համարել հավաստի:

Բարձր գնահատելով թափանցիկության ու հրապարակայնության՝ ԳՊՀ որդեգրած սկզբունքները, գրեթե բոլոր տեղեկությունները հրապարակելը և շահակիցներին հասանելի դարձնելը՝ փորձագիտական խումբն այդուհանդերձ կարծում է, որ առկա է գործընթացների որակի մասին հավաստի տեղեկատվության, չափումների, վերլուծությունների և քննադատական մոտեցման պակաս:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՊՀ-ում մշակվել է ՈԱ ձեռնարկ և գործիքակազմ, ակտիվորեն գործում է ՈԱ ստորաբաժանում, կայուն կերպով հատկացվում են ռեսուրսներ ՈԱ գործընթացների համար, թեև ոչ լիարժեք, սակայն ներգրավվում են ներքին և արտաքին շահակիցները, որակի ներքին ապահովման համակարգը գործում է հիմնականում թափանցիկ՝ փորձագիտական խումբը համարում է, որ ԳՊՀ-ն համապատասխանում է չափանիշ 10-ին:

Եզրակացություն: ԳՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

Տիգրան Մնացականյան
Փորձագիտական խմբի ղեկավար

28 փետրվարի 2022թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Տիգրան Մնացականյան՝ 2008 թ.-ին ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ «Կառավարում» մասնագիտությամբ: 2011 թ.-ին շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2011-2019թթ. եղել է ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ և դասախոս, 2019 թ.՝ ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր: 2014թ.-ից որպես արտաքին փորձագետ ներգրավվել է մի շարք ՄՈՒՀ-երի արտաքին գնահատման գործընթացներում: 2021 թ.-ին եղել է «Այբ» կրթական հիմնադրամի շահառուների հետ աշխատանքի համակարգողը, նույն թվականից ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ավագ փորձագետ է:

Հրատարակել է մի շարք գիտական հոդվածներ կառավարման տեսության, հանրային կառավարման պատմության, հանրային կառավարման ժամանակակից հիմնախնդիրների և արդյունավետության գնահատման մեթոդաբանության ու բարձրացման, տեղական ինքնակառավարման հիմնախնդիրների վերաբերյալ: Մասնակցել է բարձրագույն կրթության որակի բարձրացման հարցերին նվիրված միջազգային գիտաժողովների:

Տաթևիկ Դավթյան՝ 2003թ. ավարտել է Իրավագիտության ֆակուլտետը՝ ստանալով Իրավագիտության բակալավրի որակավորում, իսկ 2005թ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ Իրավագիտության մագիստրոսի որակավորմամբ: 2009թ. ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2013թ. ընդունվել և 2015թ. գերազանցությամբ ավարտել է Ջորջթաուն Համալսարանի Իրավաբանական դպրոցը (Վաշինգտոն, ԱՄՆ)՝ ստանալով Իրավագիտության մագիստրոսի որակավորում՝ արժանանալով նաև «Դեկանի ցուցակ» պարգևին: 2016թ.-ին ստացել է Նյու Յորք նահանգի փաստաբանի արտոնագիր, 2019թ.-ին՝ ՀՀ փաստաբանի արտոնագիր:

2007թ.-ից դասավանդում է ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնում, 2011 թվականից նույն ամբիոնի դոցենտ է: 2010-2013թթ. դասավանդել է նաև Հայաստանում Ֆրանսիական Համալսարանում: Աշխատել է ՀՀ Մարդու իրավունքների աշխատակազմում, ՀՀ Արդարադատության նախարարությունում, Ամերիկյան իրավաբանների ասոցացիայի իրավունքի գերակայության նախաձեռնության կենտրոնական գրասենյակում: 2013թ.-ից անդամակցում է Ջորջթաունի օտարերկրյա իրավաբանների միությանը, 2014 թ.-ից՝ Կին իրավաբանների միության միջազգային իրավունքի ֆորումին, 2016թ.-ից՝ «Մտավոր սեփականության ոլորտի պրոֆեսիոնալներ» գիտական-մասնագիտական խմբին:

Արամ Միսիթարյան՝ 2007 թ.-ին ավարտել է Հայաստանում Ֆրանսիական համալսարանի Միջազգային գործարարություն ֆակուլտետը: 2009թ. ավարտել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտը՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2017-2020թթ. սովորել է Մեծ Բրիտանիայի Շեֆիլդի համալսարանում՝ ստանալով Միջազգային գործարարության մագիստրոսի աստիճան:

2020թ. ստացել է Լոնդոնի Արտոնագրված կառավարման ինստիտուտի 7-րդ մակարդակի դիպլոմ:

2006-2012 թթ. եղել է «Ագրոլիզինգ լիզինգային վարկային կազմապերպության» մարքեթինգի և լիզինգի գծով ղեկավար, 2012թ.-ից մինչ այժմ գործադիր տնօրեն և խորհրդի նախագահ: 2010թ.-ից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Բանկային գործ և ապահովագրություն», իսկ 2013թ.-ից Եվրոպական համալսարանի «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնների դոցենտ է: 2015-2016 թթ. եղել է Վերակառուցման և զարգացման բանկի փորձագետ, 2017-2018թթ.՝ ՀՀ Վարչապետին կից ՓՄՁ զարգացման խորհրդի անդամ, 2017-2021թթ.՝ ՀՀ Գիտության պետական կոմիտեի Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի ղեկավար:

Հեղինակել է մի շարք գիտական հոդվածներ և գրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկի համահեղինակ է:

Սոֆի Պետերս՝ 1986թ.-ին ավարտել է Բարձրագույն կոմերցիոն հետազոտությունների կաթոլիկ ինստիտուտը Բրյուսելում: Այնուհետև իր գործունեությունն է ծավալել բրիտանական ապահովագրական ընկերությունում, ICHEC կառավարման դպրոցում: 1990-1991թթ. եղել է Բրիտանիայի դեսպանության ներկայացուցիչը Կոնգոյում: Բոլոնիայի գործընթացի իրականացման աշխատանքային խմբի անդամ է: Ստեղծել է 120 միջազգային համալսարաններ ներառող ցանց: Մինչև 2010թ.-ը եղել է Բրյուսելի ICHEC կառավարման դպրոցի Միջազգային կապերի ստորաբաժանման ղեկավար, 2010թ.-ից մինչ այժմ Միջազգային կապերի և հավատարմագրման գծով պրոռեկտորն է:

Որպես փորձագետ ներգրավված է եղել մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների գնահատման գործընթացում:

Գևորգ Բարսեղյան՝ 2014-2020թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում: Ներկայումս Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի «Համալիր (տեսագործնական) իրավական հետազոտություններ» մագիստրոսական ծրագրի մագիստրանտ է: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության նախագահն է:

2018թ. հուլիս-նոյեմբեր ամիսներին աշխատել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի օգնական: 2021թ.-ին եղել է՝ Արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ, այնուհետ նույն բաժնի ղեկավարի պաշտոնակատար, նույն թվականի ապրիլի 2-ից հուլիսի 2-ը՝ «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի խմբագրական խորհրդի անդամ-քարտուղար: 2021թ.-ից մինչ այժմ ՀՀ փոխվարչապետի ռեֆերենտն է, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Հոգաբարձուների խորհրդի անդամ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

20.11.2021 թ. - 23.11.2021 թ.

	20.11.2021 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում ԳՊՀ ռեկտորի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորի հետ	10:45	11:35	50 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	11:45	12:30	45 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5	Հանդիպում դեկանների հետ	13:50	14:40	50 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների հետ	14:50	15:50	60 րոպե
7	Հանդիպում գործատուների հետ	16:10	17:10	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	18:20	60 րոպե

	21.11.2021 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում Հոգաբարձուների խորհրդի անդամների հետ	10:50	11:40	50 րոպե

3	ԳՊՀ ռեսուրսների և ենթակառուցվածքների դիտարկում	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների (8-10 հոգի) հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում ուսանողների (8-10 հոգի) հետ	15:20	16:20	60 րոպե
7	Հանդիպում ստորաբաժանումների (Ակադեմիական քաղաքականության, Մարդկային ռեսուրսների կառավարման, Արտաքին կապերի և լրատվության, Տեղեկավտական տեխնոլոգիաների, Տնտեսական բաժիններ, Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոն, Հաշվապահություն, Գրադարան, Արխիվ, Բուժկետ) ղեկավարների հետ	16:40	17:50	70 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:50	19:00	70 րոպե

	22.11.2021թ.			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում «Համակարգչային ճարտարագիտություն» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Իրավագիտություն» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Ֆինանսներ» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում «Համակարգչային ճարտարագիտություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Իրավագիտություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Ֆինանսներ» կրթական ծրագրի դասախոսների հետ	10:45	11:45	60 րոպե
3	Հանդիպում «Համակարգչային ճարտարագիտություն» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Իրավագիտություն» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսանողների հետ	12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:10	14:10	60 րոպե
5	Հանդիպում ՈւԽ և ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ			14:20	15:10	50 րոպե
6	Բաց հանդիպում			15:20	16:20	60 րոպե

7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:30	120 րոպե

	23.11.2021 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում Որակի ապահովման բաժնի աշխատակիցների հետ	09:30	10:30	60 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	11:00	13:00	120 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
4	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:10	16:10	120 րոպե
5	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	17:20	60 րոպե
6	Հանդիպում ԳՊՀ ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Եկամուտների և ծախսերի նախահաշվի ու կատարողականի շեղումների պատճառների վերլուծություններ	2
2.	Ուսանողական գիտական ընկերության հաշվետվություններ	2
3.	Ֆակուլտետների, ամբիոնների, ստորաբաժանումների տարեկան պլաններ	2
4.	Ամբիոնների և ֆակուլտետների հաշվետվություններ	2
5.	Նիստերի արձանագրություններ /ամբիոնների և ֆակուլտետների՝ վերջին երեք տարվա համար՝ յուրաքանչյուր եռամսյակից մեկական/	2
6.	Դասավանդման ավանդական ձևերի և նորագույն մեթոդների ու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զուգակցամամբ իրականացված դասընթացների հիմքեր	3
7.	Դասավանդման որակի բարձրացման վերաբերյալ ուսանողների կողմից ներկայացված դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա մշակված բարելավման միջոցառումների օրինակներ	3
8.	Վերապատրաստումների, սեմինարների հիմքեր գրագողության դեմ ուղղված, ճիշտ ցիտելու, վերափոխելու (paraphrase) և այլ նյութերի վերաբերյալ	3
9.	Ծրագրերի մշտադիտարկման հիմքեր և դասալսումների արդյունքում փոփոխված առարկայակնա նկարագրերի օրինակներ	3
10.	Դասացուցակներ /այս ուսումնական տարվա համար/	3
11.	Մատյաններ, պրակտիկայի մատյաններ /ընտրված ծրագրերի համար՝ յուրաքանչյուր կուրսից մեկական/	3
12.	Ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր /վերջին երեք տարվա համար յուրաքանչյուր կրթական ծրագրի համար երկուական/	3
13.	Դասալսումների մատյաններ / ամբիոններից՝ մեկական/	3
14.	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսների պլաններ /յուրաքանչյուր ամբիոնից՝ հնգական/	3
15.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	3

16.	Ուսումնական խորհրդատուների կազմը, խորհրդատվության թեմաները և հանդիպումների ժամանակացույցը, գրանցումների մատյանը	5
17.	Ամբիոնների հաստիքացուցակը	5
18.	Ուսումնական ծանրաբեռնվածության նորմատիվները	5
19.	Դասախոսների վերապատրաստումների ժամանակացույց	5
20.	Վերապատրաստման փաթեթներ	5
21.	Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների ցանկեր	5
22.	Գիտական սեմինարների անցկացման գրաֆիկ, արձանագրություններ	5
23.	Երիտասարդ կադրերի պատրաստման պլան	5
24.	Հարցումների վերլուծություններ, բարելավման պլաններ /վերջին երկու տարվա համար/	5
25.	Դասախոսների կարիքների վերհանման վերլուծություններ	5
26.	Հետազոտական արդյունքները հավաստող հիմքեր և պատենտներ	6
27.	Միջազգային կառույցների հետ համագործակցության հուշագրեր համատեղ գիտական ծրագրեր կամ գիտական հոդվածներ տպագրելու նպատակով	6
28.	ՌԾ նպատակների իրականացման տեսանկյունից ֆինանսական կառավարման արդյունավետության վերլուծություններ	7
29.	Գործուղման մեկնած դասախոսների հաշվետվություններ	9
30.	Միջազգայնացման ռազմավարական ծրագրի հաշվետվություն	9

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. համակարգչային լսարաններ,
3. լաբորատորիաներ,
4. ստորաբաժանումներ,
5. «Սմարթ» կենտրոն,
6. գրադարան,
7. ընթերցասրահ,
8. բուժկետ,
9. թանգարան:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԱԱՑ- գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ

ԳՊՀ- Գավառի պետական համալսարան

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՊԴ կազմ-պրոֆեսորադասախոսական կազմ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈՒԳԸ- ուսանողական գիտական ընկերություն

ՈՒԽ- ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ